3869

Հոկտեմբերյան Հեղափոխության 5-րդ տարեդարձի տոնակատարման Հայաստանի Կենտրոնական Հանձնաժողով

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# ՆՅՈՒԹԵՐ

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

### 5-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

### ՏՈՆԱԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Ց(47)1917
Ն-82

1922
ՅԵՐԵՎԱՆ

17 APR 2014
3869
9(47)1917
Ч-82
2011-07
24 JAN 2006
1003
(4086)
54131-66
13700

# ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՏՈՆԱՀԱՆԳԻՍԻ

**Հոկտեմբերյան հեղափոխության 5-րդ տարեդարձի տոնակատարման կենտրոնական հանձնաժողովը առաջարկում է բոլոր կուսակցություններին և տոնակատարության հանձնաժողովներին ղեկավարվել հետևյալ հրահանգներով։—**

1. Նկատի առնելով, որ Կոմինտերնի 4-րդ կոնգրեսի բացումն հարմարեցված է հոկտեմբերի հինգերորդ տարեդարձին, բոլոր աշխատանքներում անհրաժեշտ է ընդգծել Ռուսական հեղափոխության միջազգային դրությունն ու այն ոգևորությունը, որ ցույց է տվել Ռուսական հեղափոխությանը միջազգային պրոլետարիատը։

2. Գավառական հանձնաժողովները պիտի առաջ տանեն իրենց բոլոր աշխատանքները՝ սերտ գործակցության գալով տոնակատարության զինվորական հանձնաժողովների հետ։

3. Տոնակատարության նախապատրաստական աշխատանքների համար հրավիրել խորհրդակցություն՝ կուսակցական և քաղաքավարական պատասխանատու աշխատավորների և բջիջների քարտուղարների մասնակցությամբ և քննության առնել մի շարք հրահանգային զեկուցումներ։ Զեկուցողների դերը հանձնել ամենապատրաստված ընկերներին։

4. Քաղաքացիական ազդարարությունի և դիմավորական գյուղացիության մեջ աշխատանք վարելու համար ընկերներ պատրաստելու պարտքն ընկնում է բջիջների վրա։ Աշխատանքն արտահայտվելու է ժողովների և միտինգների կազմակերպության մեջ, որի համար բջիջները կապ են հաստատում կուսկոմների հետ, վերցնում և ստանում են թեզիսներ, հրահանգներ և ցուցմունքներ։

5. Աշխատավորական լայն մասսաների, բանվորա-գյուղացիական յերտասարդության, Կարմիր Բանակի (որի համար քաղաքաժինը կտա հատուկ և մանրամասն հրահանգներ) և բանվորա-գյուղացիական միլիցիայի պատրաստության համար պետք է կատարել յերկշաբաթյա նախապատրաստական աշխատանք. կազմակերպել մի շարք դասախոսություններ, զրույցներ և քաղաքական դասեր հետևյալ թեմաների շուրջը։

ա) Խորհրդային իշխանության 5 տարին (խորհրդային շինարարություն, տնտեսության վերականգնումն, հանրապետության ռազմական ուժը, կապն արտաքինի հետ)։

բ) Ի՞նչ տվեց աշխատավորներին Հոկտեմբերյան հեղափոխությունը (իշխանության գրավումն, լուսավորության գործի կազմակերպությունը, աշխատանքի պաշտպանությունն և այլն։

գ) Յերրորդ Կոմինտերնի 4-րդ կոնգրեսի դերն ու նշանակությունը։

դ) Ի՞նչ է արել և ի՞նչ է անում Խորհրդային իշխանությունն թե գյուղատնտեսության և արդիւնաբերության բարձրաման և թե սովի ու նրա հետևանքների դեմ պայքարելու նպատակով։

ե) Ի՞նչու համար և ի՞նչ հարկեր է ժողովում Խորհրդային իշխանությունը։

զ) Ի՞նչ նպատակով են կիրառում ազատ առևտուրը, կապալը և կոնցեսիաները (Տնտեսական Նոր Քաղաքականությունն)։

ը) Ի՞նչ արդյունքների հանգեց Խորհրդային իշխանությունը կապիտալիստական պետությունների հետ բանակցելիս (Ջենովան, Հաագան և բուրժուական առանձին պետությունների ներկայացուցիչների հետ կնքած տնտեսական պայմանագրությունները)։

Բանվորա-գյուղացիական յերիտասարդության մեջ զրույցներ ունենալ հետևյալ թեմաների շուրջը.—

ա) Բանվորա-գյուղացիական յերիտասարդության դերը Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների և ամրապնդման մեջ։

բ) Բանվորա-գյուղացիական յերիտասարդության դերը Խորհրդային իշխանության շինարարության մեջ։

գ) Յերկամ. միության դերը բանվորա-գյուղացիական յերիտասարդության վերակրթության և կոմունիստական ազդեցության գործում։

դ) Բանվորա-գյուղացիական յերիտասարդության միջազգային դրությունը։

Յերիտասարդ կարմիր բանակայիններին հետ զրույց ունենալ հետևյալ թեմաների շուրջը.—

ա) Ի՞նչ է Խորհրդային իշխանությունը և յերբ է ծնունդ առել նա։

բ) Այս 5 տարվա ընթացքում ում հետ է պատերազմել Խորհրդային իշխանությունը (արտաքին և ներքին հակահեղափոխությունը)։

գ) Ինչու համար սրանից 2 տարի առաջ մեզ հարկավոր եր թվով ու վորակով մեծ կարմիր բանակ, իսկ հիմա— բավական է և փոքր, (ընդգծել քանակն ու վորակը)։

դ) Ինչու մենք չենք կարող զինաթափվել։



ե) Յերրորդ Կոմինտերն ու Կարմիր բանակը։

զ) Ինչու համար է 3-րդ Կոմինտերնի 4-րդ Կոնգրեսը նշանակված Նոյեմբերի 7-ին։

ը) Կարմիր Բանակի դերը Հոկտեմբերյան հեղափոխության ամրապնդման աշխատանքում։

թ) Հոկտեմբերյան հեղափոխությունը և ճնշված ժողովուրդների ազատագրությունը։

ժ) Կոմինտերնի զարգացման պատմությունը և կոմունիստական կուսակցության դերը հեղափոխության մեջ։

6. Նախապատրաստական աշխատանքը ակումբներում արտահայտվում է հետևյալում.— Ակումբները մոբիլիզե յեն անում գոյություն ունեցող բոլոր խմբակներին, վորոնք մի ընդհանուր ծրագրով խորացրած աշխատանք են կատարում, գալիք տոնահանդեսը բազմակողմանի կերպով լուսաբանելու համար։

7. Ուղղիչ տներում, հիվանդանոցներում և հաշմանդամների կացարաններում աշխատանքն արտահայտվում է—այս միտինգների և զեկուցումների կազմակերպությամբ։

## ՏՈՆԱՀԱՆԴԵՍԻ ԿԱՐԳԸ 6-ԻՆ ԵՎ 7-ԻՆ

8. Նոյեմբերի 6-ին հրավիրել միացյալ և հանդիսավոր նիստ խորհրդային, կուսակցական, արհեստակցական կազմակերպությունների և զորական մասերի, կազմակերպել դասախոսություններ և զրույցների ու հիշողությունների միջոցով ընդգծել Հոկտեմբերյան հեղափոխությունը։

9. Նոյեմբերի 7-ին քաղաքին կամ գյուղին տալ հանդիսավոր ու տոնական տեսք։ Առաջարկել բոլոր կազմակերպություններին, հիմնարկություններին, կոլեկտիվներին և տնատերերին զարդարել տները կանաչներով, դրոշակներով, գորգերով, պլակատներով և լոզունգներով։ Այդ նպատակով հենց տեղական սրջոցներով մրցանակաբաշխություն հայտարարել շենքերից ամենալավ զարդարվածի համար։ Քաղաքում ընտրել մի կենտրոնական հրապարակ՝ արձան կանգնեցնելու, միտինգի և զորահանդեսի համար։ Հրապարակին տալ տոնական տեսք, զարդարելով այն դրոշակներով, կամարներով և կանաչով։ Հրապարակի կենտրոնում կառուցել տրիբուն և ծրագիր մշակել ինչպես հրապարակում կանգնելու, այնպես էլ հանդիսավոր յերթին մասնակցող կուսակցական, արհեստակցական կազմակերպությունների, բանվորա-գյուղացիական մասսաների և զորամասերի համար։ Տրիբունի շուրջը կարող են կառուցվել սյուներ՝ վրան ամրացրած մուրճ ու մանգաղով և Հոկտեմբերյան հեղափոխության ու Կոմինտերնի վերաբերյալ լոզունգները կրող տախտակներով։ Միտինգի ղեկավարության, շքերթի և արձանի կառուց-

ման համար ընդհանուր մեկ ղեկավար և նշանակվում գավառա-
կան հանձնաժողովի կողմից։

Հանձնաժողովը կանխորոք նշանակում է և հռետորներին, վորոնք խոսելու յեն սույն հրահանգի 5-րդ կետում ցույց տված նյութերի շուրջը։

Ճառերը պիտի լինեն բովանդակալից և պարզ։

Արձան կառուցելու դեպքում ծանոթացնել մասսաներին այն մարդկանց կենսագրությանն ու հեղափոխության առաջ կատարած ծառայություններին, ում հիշատակին կառուցվում է արձանը։

Յերեխաների համար հրապարակներում կազմակերպվում են խաղեր և մրցումներ։

10. 7-ին, յերեկոյան, քաղաքը կամ գյուղը հրավառվում են լուսավորված լապտերներով և կերոններով։ Բոլոր ակումբներում կազմակերպվում են դեկուցումներ, զրույցներ, բեմադրություններ և յերգ-յերաժշտական յերեկույթներ։

Բեմադրության կամ համերգից առաջ տեղի յե ունենում կարմիր հերոսների մեծարումն։

# ԹԵԶԻՍՆԵՐ

## ԱԳԻՏԱՏՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

### 1. Խորհրդային հանրապետության միջազգային դրությունը

Խորհրդային հանրապետությունը միջազգային կապիտալի ճակատում այն առաջին ճեղքվածքն է, վոր ստեղծվել է միջազգային պրոլետարիատի ռուսական զորախումբի ջանքերով։ Ռուս պրոլետարիատի վերջնական հաղթանակը հնարավոր է լոկ այն ժամանակ, յերբ հաղթանակեց համաշխարհային պրոլետարիատը։ Խորհրդային հանրապետության գոյության հինգամյակի ընթացքում պրոլետարիատին ժամանակավորապես վիճակվեց հաղթանակել միմիայն Ֆինլանդիայում և Հունգարիայում, Գերմանիայում, Ավստրիայում։ Սակայն Ֆինլանդիայում և Հունգարիայում պրոլետարիատի հաղթանակը ջախջախվեց տեղական և արտասահմանյան բուրժուազիայի կոալիցիոն ուժերով. ինչ վերաբերում է Գերմանիային և Ավստրիային, այստեղ էլ, շնորհիվ սոցիալ-դեմոկրատիայի վերաճնող ազդեցության, իր կարճատև իշխանությունից հետո, պրոլետարիատն ինքը հանձնեց



իշխանությունը բուրժուազիային։ Այսպիսով Խորհրդային Ռուսաստանը մինչև այսոր էլ շարունակում է մնալ կապիտալիստական շրջակալության ողակում։ Կապիտալիստական բոլոր յերկրներում էլ դեռ նոր-նոր է սկսվում Կոմունիստական կուսակցությունների ձևավորումն, վորպես գլխավոր լծակի՝ դեմոկրատական թղենու տերևով քողարկված կապիտալի գերիշխանության դեմ պայքարելու համար։ Սակայն յեթե պրոլետարիատին չհաջողվեց Ռուսաստանից դուրս էլ իշխանությունն իր ձեռքը ձգել, այնուամենայնիվ կապիտալիստական յերկրների դրությունը այնպես է, վոր հնարավորություն չի տալիս վերջիններիս միավորել իրանց ուժերը՝ Խորհրդային Ռուսաստանը վոչնչացնելու նպատակով։ Խորհրդային Ռուսաստանը վոչնչացնելու առաջին փորձը, վոր տևեց մինչև 1920 թիվը, վերջացավ միջազգային կապիտալի կատարյալ պարտությամբ։ Նա ընդունակ չեր միավորել իր բոլոր ուժերը, վորովհետև այստեղ նրան արգելք եյին հանդիսանում նրա հին հակասությունները (դաշնակիցների և գերմանական կապիտալի), ինչպես և հակասությունները հենց իրենց դաշնակիցների շարքերում — ճապոն-ամերիկական, ֆրանս-անգլիական և ինչպես ռուսական սպիտակների և ծայրագավառային հակա-հեղափոխականների միջև գոյություն ունեցող հակասությունները։ Պատերազմից առաջացած տնտեսական քայքայումն տարեցտարի զորեղանում եր, շնորհիվ այն հանգամանքի, վոր միջազգային բուրժուազիան վոչ միայն ընդունակ չեր միավորել իր ջանքերը, այլ և ընդհակառակը, աշխատում եր հաղթող պետությունների տնտեսությունը վերականգնել ի հաշիվ պարտված յերկրների։ Տնտեսական փլուզումն, ինչպես և միջազգային կապիտալիստական պետությունների հակասությունները բանվորության մեջ առաջ են բերում խմորումներ և հեղափոխական դիրքերին անցնելու աստիճանական և անդուսպ մի պրոցես։ Անկարող լինելով պարտված յերկրներից դուրս քաշել սեփական տնտեսությունների վերականգնման համար անհրաժեշտ միջոցները, հաղթող պետությունների բուրժուազիան հարկադրված է տնտեսական քայքայման ամբողջ ծանրությունը դնել սեփական պրոլետարիատի ուսերին։ Ամենուրեք նա արշավում է պրոլետարիատի վրա, վատթարացնում է նրա դրությունը և այսպիսով մերկացնում է սոցիալ-դեմոկրատական այն առասպելը, թե իբր սոցիալիզմին կարելի յե հասնել խաղաղ, դեմոկրատիկ ճանապարհով։ Նա ապացուցում է բանվորներին, վոր առանց հեղափոխական պայքարի և կապիտալի գերիշխանության տապալման վոչ միայն չի կարելի սոցիալիզմի հասնել, այլ և հնարավոր չե զսպել բանվոր դասակարգի դրության վատթա-

բացման պրոցեսը։ Յեթե Խորհրդային Հանրապետության գոյության անցած հինգ տարիների ընթացքում հեղափոխական շարժումն հազթող չհանդիսացավ, այնուամենայնիվ նա չլսված խոչընդոտներ դրեց Խորհրդային Ռուսաստանի վրա առաջխաղացող համաշխարհային ռազմարշավ կապիտալի առաջ և այսոր կամաց-կամաց զորաժողովի յև կանչում բանվորական մասսաներին իշխանության համար պայքար մղելու։

## 2. Խորհրդային Ռուսաստանի հինգամյա գոյության ցեղին արդյունքները

Խորհրդային Ռուսաստանի գոյության առաջին յերեք տարիների ընթացքում ռուս պրոլետարիատը, հենվելով գյուղացիության հեղափոխական տարրերին, նախ՝ վերացրեց ամբողջ ապարատը, ապա վոչնչացրեց և արմատախիլ արեց կալվածատերերի տնտեսական իշխանությունը, հանձնելով հողը գյուղացիներին և վերջապես՝ արդյունաբերությունը խլեց բուրժուազիայի ձեռքից։ Իր՝ պետականացման քաղաքականությամբ, վոր կիրառվում եր Խորհրդային Ռուսաստանի գոյության առաջին յերեք տարիների ընթացքում, պրոլետարիատը անհրաժեշտ միջոցներ ձեռք բերեց պաշտպանելու համար Խորհրդային պետությունը և հեղափոխության սոցիալական նվաճումները միջազգային կապիտալիստական հակա-հեղափոխությունից, վորը վերակազմելով սպիտակների զորքերը՝ նեցուկ եր դառնում նրանց համար։ Այս նպատակին նա կարողացավ հասնել շնորհիվ այն հանգամանքի, վոր խլեց նյութական բոլոր միջոցները բուրժուազիայից, կենտրոնացրեց այն Խորհրդային կառավարության յերկաթե ձեռքերում և տերրորի անողոք գործադրությամբ կարողացավ խաղաղություն ապահովել քաղաքացիական ճակատների թիկունքում։ Քաղաքացիական զինված պայքարի այս շրջանի ավարտը, վոր զուգադիպվեց Վրանգելին հաղթանակելուն, առաջին հերթին դրեց տնտեսական վերածնության խնդիրները։ Քաղաքացիական պատերազմից մնացած ավերակներն ու մոխրակույտերը վերացնելու աշխատանքի փորձը, ինչպես և աշխատանքի բանակների միջոցներով նյութական առաջին ֆոնդերի ստանումն՝ վերաշինական աշխատանքի նպատակով— հաջողությամբ չպսակվեց, թեև այդ աշխատանքը ձեռնարկված եր վոչ հանուն միայնբանվորության շահերի, այլև այն գյուղացիության, վոր սեծապես տուժում եր փոխադրության վիճակից, միջոցների և վառելիքի պակասությունից և այլն։ Նա չկարողացավ, վորովհետև յերկրի պաշտպանությունը լեհական առաջընթացքից և Վրանգելի հարձակումից, նորից հարկադրեց աշխատանքի բանակները դցել ռազմաճակատ, ինչպես և շնորհիվ այն հանգամանքի, վոր քաղաքացիական պատերազմի շարունակությունը 192-



թվին ավելի ևս կազմալուծեց գյուղական տնտեսության դրությունը։ Այս վիճակն անհրաժեշտ դարձրեց առաջին հերթին շունչ առնելու հնարավորությունը տալ գյուղական տնտեսությանը, վորը ծայր աստիճան սնանկության եր հասել համաշխարհային պատերազմի և յեռամեա քաղաքացիական պայքարի շնորհիվ։ Դիմելով տնտեսական աշխատանքի, Խորհրդային Ռուսաստանը պետք եր դառնար Հոկտեմբերյան հեղափոխության դիրքերին, վորի սահմաններից շատ հեռու յեր անցել նա՝ քաղաքական պատերազմից հարկադրված։ Նախ և առաջ նա պետք եր հրաժարվեր մասնաբաժնման (разверстка) սիստեմից, վոր վոչինչ չեր թողնում գյուղացիներին՝ բացի ապրուստի նվազագույնից (минимум)։ Միաժամանակ այն միջոցին, յերբ գյուղացիության զավակները, բանվորների ղեկավարությամբ, պաշտպանում եին կալվածատերերից խլած հողը, հնարավոր չեր բռնագանձել նրանց հայրերից այն ամենը, ինչ անհրաժեշտ եր բանակի համար աշխատող բանվորությունը կերակրելու նպատակով, և այդ՝ չնայած այն հանգամանքի, վոր արդյունաբերությունը դեռ անզոր եր տալ գյուղացիությանը հացի փոխարեն— իր արդյունաբերության ապրանքներից։ Մասնաբաժնման քաղաքականությունը պահանջում եր ամեն տեսակի առևտրի կատարյալ բացասումն։ Գյուղացիության աշխատանքի ամբողջ ավելցուկի բռնագանձումն վերացնում եր գոյաչափի սահմաններից վեր աստիճանելու բոլոր խթանները գյուղացիական մասսաներում։ Մասնաբաժնման փոխարինումն չափավոր պարենհարկով և ավելցուկների ազատ վաճառման իրավունքի թույլտվությունը այդպիսով վոչ միայն զինումն և գյուղացիական մասսաների դժգոհության, վոր բուռն թափով արտահայտվեց 1921 թվի ձմեռն ու գարնանը, այլ և միաժամանակ գյուղացիական տնտեսության զորեղացման մի միջոց, վոր առաջին նախապայմանն և արդյունաբերության վերածնության։ Սակայն ապրանքային տնտեսության թույլատրումն գյուղում հավասարազոր եր նրա վերածնությանը և քաղաքում։ Յեվ վորովհետև տնտեսական քայքայումի վեց տարիներից հետո, պետական արդյունաբերությունը անզոր եր բավարարություն տալ գյուղացիության տնտեսությանը, ապա անհրաժեշտ յեղավ քաղաքում ևս թույլատրել մասնավոր արդյունաբերությունն ու արհեստավորական նախաձեռնությունը՝ պարենհարկի սահմաններից ավելի հաց դուրս բերելու համար գյուղից՝ արդյունաբերական ֆոնդեր ստեղծելու նպատակով։ Նույն ուղղությամբ եր գործում և բանվորական պետության կազմակերպչական ուժերի դրությունը, վոր թույլ չեր տալիս պետության ձեռքում պահել մանր, յերբեմն և միակ պետականացրած արդյունաբերությունը։ Պետությունը հարկադրված և ի-

ջանքերը կենտրոնացնել խոշոր արդյունաբերության հիմնական ճյուղերի վրա, որոնց վերականգնումն վճռական ազդեցություն-ների հնարավորություն է տալիս յերկրի տնտեսական զարգացման ընթացքին։ Այսպիսով, տնտեսական նոր քաղաքականությունը վոչ թե մի կարճատև նահանջ է՝ մոմենտի ճնշող կարիքներից ստիպված, այլ ներկայացնում է պրոլետարական քաղաքականության այն տիպը, որը միայն և հնարավոր է գերազանցորեն գյուղացիական յերկրում՝ նրա միջազգային մեկուսացման պայմաններում։ Բայց Խորհրդային իշխանությունը, նահանջելով, ավելի հեռու պիտի գնա իր գոյության առաջին յերեք տարիների սոցիալական քաղաքականությունից։ Ծանրաբեռնված լինելով ցարիզմի և բուրժուազիայի պետական հսկայական պարտքերի ժառանգությամբ և հարկադրված՝ իր տնտեսական վերականգնումն արագացնելու նպատակով՝ փոխառություններ վերցնելու կապիտալիստական շուկաներում,— նա ստիպված եր զիջումներ անել համաշխարհային բուրժուազիային, կոնցեսիոն հիմունքներով տալով նրան թե գոյություն ունեցող ձեռնարկությունների մի մասը և թե շահագործումն յերկրի կուսական հարստությունների։ Այսպիսով, վորպես տնտեսական վերջնագումար Խորհրդային Ռուսաստանի հինգամյա գոյության՝ անհրաժեշտություն է ստեղծվում համակցության (сочетание) բերելու ռուսական տնտեսականության մեջ, մի կողմից, պրոլետարիատի ձեռքին գտնվող խոշոր արդյունաբերությունը, ճանապարհները և այլն, և այլն և մյուս կողմից, գյուղական մասնավոր մանր տնտեսությունը, ինչպես և ապրանքային տնտեսությունը վոչ միայն մանր արհեստավորների, և արդյունաբերողների, այլև կապալի հիմունքներով ստեղծված մասնավոր խոշոր արդյունաբերությունը։ Ռատերկրյա կապիտալին արած զիջումները պրոլետարական պետության տնտեսական ուժի զորավորման յելակետ կդառնան այն ժամանակ միայն, յեթե նրանք կկերտավեն այնպիսի պայմաններով, որ հնարավորություն տան Խորհրդային կառավարությանը ռատերկրյա կոնցեսիոներներից ստացած կապալավարձի մի մասը գործադրելու պրոլետարական պետության խոշոր ձեռնարկությունների արտադրությունը զորացնելու վրա։

Այդ իսկ պատճառով է, որ արտասահմանյան կապիտալը ջանում է խլել Խորհրդային կառավարության այդ զիջումն՝ որպես հատուցում հեղափոխությունից ռատերկրյա կապիտալին հասցրած վնասների, միաժամանակ մերժելով նրան թե վարկերում և թե փայական այնպիսի հատկացումներում, որոնք կարող եին միջոցներ ստեղծել Խորհրդային կառավարությանը՝ ուժեղացնելու սեփական արտադրությունը և կհարկադրեին նրան



արտասահմանյան կապիտալին հանձնել ռուսական ամբողջ արդյունաբերությունը, յերկաթուղիները և բնական հարստությունները։ Խորհրդային իշխանության տնտեսական գերակշիռը (перевес) վերացնելու փորձը՝ հակամարտ և ռուսական տնտեսության վրա աչք դրած ուժերի կողմից՝ Խորհրդային իշխանությունը մերժեց արդեն Ջենովայում և Հաագայում։ Նա հրաժարվեց վորևէ նյութական պարտավորություններ ստանձնելուց՝ առանց իր սեփական զորավորման համար անհրաժեշտ միջոցներն ստանալու նախապայմանի։ Յեվ նա փորձում է այժմ միջազգային կապիտալի փաստական շրջակալումն պատռել՝ կապիտալիստական խմբակների և Ռուսաստանի հետ տնտեսական կապեր ունենալու հարցում շահագրգռված պետությունների հետ առանձնական պայմանագրություններ կնքելու միջոցով։ Այս պայքարում հաջողությունը կախված է միջազգային դրության հետագա զարգացումից, գալիք բերքերից և Խորհրդային հանրապետության տնտեսական մարմինների ռուսական շուկայում մասնավոր կապիտալի դեմ ցույց տված մրցակցության կարողությունից։

### 3. Քաղաքական արդյունքներ

Տնտեսական նոր քաղաքականության մեջ համաշխարհային բուրժուազիան Խորհրդային կառավարության մի նոր կապիտուլյացիայի սկիզբն է տեսնում,—պրոլետարիատի լիակատար հրաժարումն սոցիալիստական շինարարությունից։

Սոցիալիզմի դրոշակով հանդես յեկող ռուս մանր բուրժուազիայի կուսակցությունը, հեղափոխության ընթացքում բանվորների և գյուղացիների մասաներից ջախջախված ես-երների և մենշևիկների կուսակցությունները՝ լիակատարապես համերաշխ լինելով միջազգային բուրժուազիային՝ Խորհրդային Ռուսաստանի տնտեսական նոր քաղաքականությունը ներկայացնում են վորպես նրա «սկիզբն վախճանաց» և ջանում են դիմել առաջընթացքի, որ իրը հնարավորություն է տալու նրանց դնել Ռուսաստանը կապիտալիստական զարգացման յերկաթգծին՝ բուրժուական դեմոկրատիայի իշխանության քաղաքական ձևով։ Փաստորեն հակառակորդ լինելով սոցիալիստական շինարարությանը, ինչպես այդ ապացուցեցին նրանք մարտ ամսի հեղափոխության շրջանում, նրանք այժմ փորձում են ստեղծել այնպիսի պայմաններ, որ հաղթանակող հանդիսանա բուրժուազիան։ Նրանք ձգտում են բուրժուական դեմոկրատիայի վերականգնման, հուսալով, որ նրա իշխանության որով գյուղացիությունը, որ Ռուսաստանի ազգաբնակության մեծագույն մասն է կազմում, անգոր կլինի պաշտպանել խոշոր արդյունաբերության պետականացման սկզբունքը և, որպես մանր սեփականատերերի դասակարգ՝ չի ցանկանա վորևէ

զոհաբերություններ տալ նրա պահպանության համար։ Բայց չհամարձակվելով պարզեիպարզ ծավալել այդ ծրագիրը, մենշևիկների և ես-երների կուսակցությունները ներկա կացության մեջ ձգտում են աղատություն ձեռք բերել բոլոր սոցիալիստական կուսակցությունների համար, որպիսին համարում են և իրանց կուսակցությունները։ Ստանալով գործելու լայնարձակություն, նրանք դառնալու էին այն կազմակերպված հունը, որի մեջ պիտի լցվեին գյուղի կուլակային տարրերը և քաղաքի մանր-բուրժուական մասը, բայց և սրանից զատ, նրանք դառնալու էին մի որինականացված կենտրոն խոշոր բուրժուազիայի համար, որ բաղմիցս արդեն ապացուցել է, որ կարողանում է իր կամքին հպատակեցնել մանր բուրժուական կազմակերպությունները։ Նրանք անկարող պիտի լինեին հետմղումն տալ ոտարերկրյա կապիտալի սեղմումին, ինչպես այդ ապացուցվեց մարտ ամսի հեղափոխության և քաղաքացիական պայքարի ժամանակ և ուրեմն՝ Խորհ. Ռուսաստանի վրա ձեռնարկած նրա սեղմոցի գործադրիչը պիտի դառնային։ Ահա թե ինչու պրոլետարիատի կուսակցությունը բոլոր ուժերով պաշտպան պետք է լինե նրա դիկտատուրայի՝ ընդդեմ մանր բուրժուական կուսակցությունների պահանջների, որովհետև մանր բուրժուական ամեն մի նոր կազմակերպության թույլատրումն մեծ վտանգ է ներկայացնելու Հոկտեմբերյան հեղափոխության համար։ Հենց այն պատճառով, որ տնտեսական նոր քաղաքականությունը հավասարազոր է բուրժուազիայի տնտեսական ուժերի մասնակի վերածնության, այդ նկատառումով ել անհրաժեշտ է պրոլետարական դիկտատուրայի բոլոր մեթոդների գործադրումն, որպեսզի թույլ չը տրվի բուրժուազիային այդ ուժերը ոգտագործել իր տնտեսական և քաղաքական կազմակերպության համար։ Խոշոր և մանր բուրժուազիայի, ձախակողմյան կադետների, եսերների և մենշևիկների քաղաքականության ամբողջ իմաստն այն է, որ պայքարեն որինականություն ձեռք բերելու տնտեսական նոր քաղաքականության հողի վրա՝ խորհրդային սահմանադրության ոգտագործման միջոցով։ Առաջ քաշելով Խորհուրդների ազատ ընտրության լոզունգը, մենշևիկներն ու եսերները հենվում են խորհրդային սահմանադրության վրա։ Սակայն ռուս պրոլետարիատն ու կոմունիստական կուսակցությունը թույլ չեն տա, որ Խորհրդային սահմանադրությունը՝ պրոլետարական դիկտատուրան բուրժուական դիկտատուրայի վերածելու զենքը դառնա։ Այդպես ել ստեղծվել է Խորհրդային սահմանադրությունը՝ բուրժուազիայի և նրա մանր բուրժուական ուղեկիցների, եսերների և մենշեվիկների դեմ վարած պայքարում, այդպես ել պիտի պաշտպանվեն թե



խորհուրդների գոյությունը և թե հոկտեմբերյան հեղափոխության տնտեսական նվաճումները՝ այսինքն, պայքարի գընով այն կուսակցությունների դեմ, որոնք անհրաժեշտություն են համարում Խորհրդային սահմանադրությունն տեսակետին կանգնելու՝ նրա վոչնչացման և վերացման նպատակով։ Այդ բնավ չի նշանակում Խորհուրդների նշանակության, նվաստացումն ինչպես այդ մասին աղաղակում են մենշևիկներն ու ես-երները։ Բանվորական և գյուղացիական լայն Խորհուրդներն եյին, որ զենք ծառայեցին բուրժուազիայի իշխանությունը տապալելու գործում։ Քաղաքացիական պայքարի շրջանում պրոլետարական դիկտատուրայի այդ լայնարձակ ձևը սեղմվելով վերածվեց զինված բռունցքի, որ կառավարում եր Կարմիր բանակին ու արտադրությունը։ Կյանքի կենտրոնը խորհուրդներից փոխադրվեց պատերազմի և աշխատանքի ճակատները, հանրապետության պաշտպանության հեղափոխական մարմինները։ Քաղաքացիական զինված պայքարի ավարտումով, բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական դրության բարելավման հետ միասին, պրոլետարական դիկտատուրան նորից սկսում է լայնարձակվել։ Խորհուրդները նոր կյանք են առնում, որոնում են և յերկիրը կառավարելու նոր մեթոդներ են գտնում։ Նրանք վոչ մի ջնաս չեն ստանում այն յերևույթից, որ խորհուրդներում բացակայում են մանր-բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչները և ուրեմն վոչ մի քննադատություն չեն դիմանում մենշևիկների և ես-երների այն հեքյաթները, թե իբր կյանքը Խորհուրդներում մեռնում է, որովհետև ազատ քննադատություն չկա։ Սրանք վոչ այլ ինչ են, բայց յեթե չարամիտ ստահոդություններ։ Աշխարհիս յերեսին և վոչ մի մամուլի եջերում այնպիսի ազատ և անխնա քննադատություն չկա կառավարության գործունեության, որպիսին կա խորհրդային մամուլում, որը չի վախենում դիսկուսիոն կարգով ամբողջ թշնամի աշխարհի առաջ գրել ու քննադատել խորհրդային ռեժիմի բոլոր պակասավոր և թույլ կողմերը։ Մենշևիկների և եսերների բացակայությունը խորհուրդներում վոչ թե քննադատության բացակայությունն է նշանակում, այլ՝ բանվորա-գյուղացիական դեմոկրատիայի շարքերում-հակա-հեղափոխական քայքայման բացակայություն։ Կոմունիստական կուսակցության դեկտատուրայի միջոցով գործադրվող պրոլետարիատի դիկտատուրան կարող է փոխել իր գործելակերպի մեթոդները։ Քաղաքացիական սուր պայքարի տերորիստական ձևերից—դեպի հեղափոխական որենականություն ձևերը, սակայն և այժմ պրոլետարական պետություն պաշտպանության յերկաթե մարմին պիտի լինի վերադառնալու տերրորի ձևերին այն մոմենտին, յերբ բուրժուազիան նորից կփորձի արշավանք սկսել բանվոր դասակարգի դեմ։

### 4. Հեռանկարներ

Խորհրդային իշխանության բախտը անմիջականորեն կապված է համաշխարհային հեղափոխության բախտից։ Սակայն յեթե 1918 թվին կարելի յեր վախենալ, թե պատերազմի ավարտումն՝ առանց համաշխարհային հեղափոխության անհապաղ հաղթանակի՝ կարող է պատճառ դառնալ Ռուսաստանի Խորհրդային իշխանության կործանումի, ապա այժմ, նրա հինգամյա գոյությունից հետո, ամենայն վստահությամբ կարելի յե ասել, վոր մենք բավական չափով ուժեր ունենք մեկուսացմանն ավելի յերկար ժամանակ դիմանալու համար։

Բուրժուազիայի ատոմիզացիան, սպիտակների քայքայումն, եսերների և մենշևիկների մանր-բուրժուական կուսակցությունների զինջոջանությունը, վորպես ռուս և միջազգային հակահեղափոխական դաշնակիցների, զորեղ կոմունիստական կուսակցության կազմակերպումն, դանդաղ, սակայն ատիճանական բարեկարգումն Խորհրդային ապարատի և Կարմիր բանակի,—այս ամենը հակայական գերակշիռ է տալիս Խորհրդային իշխանությանը՝ նրա թշնամիների վերաբերմամբ։ Յերկրի գյուղատնտեսական բնույթը թույլ է տալիս նրան դանդաղությամբ, բայց և այնպես—անխուսափելիորեն բուժել վերքերը և ֆոնդեր ժողովել նրա արդյունաբերական վերածնության համար։ Խորախոր հակասությունները համաշխարհային բուրժուազիայի բանակում, սոցիալական պայքարի առանձնական սուր բնույթը կապիտալիստական յերկրներում, խորավորվող և որըստորե լարվող հեղափոխական ճգնաժամը Արևելքում,—այս բոլորը զորեղացնում է Խորհրդային Ռուսաստանի նշանակությունը և հեռանկարներ է բաց անում Արևմուտքի հետ տնտեսական կապեր ստեղծելու համար, վոր և հնարավորություն կտա թե արագացնել սեփական արդյունաբերական զարգացումը, թե ի մի ժողովել ռուս պրոլետարիատի ուժերը և թե բարեկարգել նրա դրությունը։ Նոր տնտեսական քաղաքականությունը հիասթափումն առաջ բերեց արևմտյան-Յևրոպայի պրոլետարիատի մի վորոշ մասում, վորն ինքը պայքարելով անասելի դժվարություններով, ինքը անզոր լինելով մեկին դեռևին տապալելու բուրժուազիային՝ ուժեր և հույսեր եր ժողովում այն համոզմունքից, թե Խորհրդային Ռուսաստանը մեկ հարվածով հաջողեց կապիտալիզմի տապալումն։ Բայց մեր զորեղացման մասին ամեն մի նոր լուրը, Խորհրդային Ռուսաստանի դրության բարելավման մասին ամեն մի տեղեկությունը՝ նոր խթան կդառնա միջազգային պրոլետարիատի որավուր աճող հեղափոխական ուժերի զորավորման համար և՝ դրա միջոցով—մի նոր գործոն Խորհրդային Ռուսաստանի զորեղացման։ Այժմ Խորհրդային Ռուսաստա-



նին վիճակված է համաշխարհային կապիտալի զորաճակատում ստեղծված ճեղքվածքը պաշտպանել իր միակ ուժերով և ավելի յերկար ժամանակ, քան այդ յենթադրվում եր 1917 թվին և այդ՝ հակայական բեռ է դրել ռուսական պրոլետարիատի ուսերին։ Սակայն Խորհրդային Ռուսաստանն ավելի ուժեղ դուրս յեկավ, քան կարծում եր բանվոր դասակարգը իշխանությունն իր ձեռքը առնելիս։ Նա կարողացավ հինգ տարվա ընթացքում դիմանալ համաշխարհային բուրժուազիայի սեղմոցին և կարող է վոչ միայն ապագայում ել դիմանալ նրան՝ մինչև պրոլետարիատի ապատամբումն արդյունաբերական յերկրներում ել, այլև կարող է աջակից լինել նրան՝ իր ազատագրական պայքարում։

Ռ. Կ. Կ. Կ. Կ. Ագիտ-պրոպ բաժին

## ԿՈՄԻՆՏԵՐՆԻ 4-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

(ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ԸՆԿ. ԶԻՆՈՎՅԵՎԻ)

### ԿՈՆԳՐԵՍԻ ՈՐԱԿԱՐԳԸ

Ընկերներ, ձեզ հայտնի յե արդեն, վոր նոյեմբերի 7-ին, մեր հեղափոխության 5-րդ տարեդարձի որը, նշանակված է Կոմինտերնի 4-րդ համաշխարհային կոնգրեսը։ Բոլոր այն կուսակցությունները, վորոնք մտնում են Կոմինտերնի մեջ, դիմում են արդեն նախնական քննության այն որակարգի, վոր մշակված է Կոմինտերնի գործադիր կոմիտեյի կողմից։ Ընդհանուր գծերով այդ որակարգը հետևյալն է.

Կոմինտերնին վիճակվելու յե կրկին անգամ կանգ առնել մեր ժամանակի տակտիկական գլխավոր խնդիրների վրա։ Այդ պատճառով որակարգի առաջին կետերից մեկը Կոմինտերնի գործելակերպի հարցն է։ Կասկած չկա, վոր այս կետում ամենազորավոր դիսկուսիան առաջ է գալու միացյալ ճակատի խնդրի շուրջը։ Այնուհետև, յերկրորդ և, գուցե ամենակարևոր խնդիրն է լինելու Կոմինտերնի ծրագրի խնդիրը։ Այս բոլորից հետո գալիս է արհմիությունների խնդիրը, հողային հարցը, աշխատանքն Արևելքում և այնուհետև վերջերս միաք և ծագել այս կամ այն ձևով կրկին քննության առնել Ռուսաստանի Խորհրդային հանրապետության նոր տնտեսական քաղաքականության խնդիրը։

Համաշխարհային 3-րդ կոնգրեսին այդ մասին զեկուցեց ընկեր Լենինը, սակայն մեր կուսակցությունն այն ժամանակ դեռ նոր եր ուրվագծել այդ քաղաքականության հիմնական գծերը և ընկ. Լենինը կարող եր լոկ տեսական քննության յենթարկել այդ քաղաքականությունը։ Մինչդեռ այս տարի մենք կարող կլինենք ներկայացնել Ինտերնացիոնալին մի քանի կոնկրետ յեզրակացություններ և մի տարվա աշխատանքի վերջնագումարը։

## ԾՐԱԳԻՐԸ

Ինչ վերաբերում է ծրագրին, այստեղ անհրաժեշտ է նկատի առնել հետևյալը։ Մի ընդհանուր ծրագիր մշակել ամբողջ աշխարհի բանվորների համար՝ դա չափազանց դժվարին գործ է։ Ներկայումս Կոմինտերնի մեջ են մտնում 52 կուսակցություն և բացի այդ՝ Կոմինտերնին հարող մի շարք խմբակներ, որոնք վերջնականապես կոմունիստական չեն դեռևս։ Այն պայմանները, ուր աշխատում է այդ բոլոր կուսակցություններից ամեն մեկը առանձնապես, չափազանց տարբեր են։ Եվ այս հանգամանքը հսկայական խոչընդոտներ է հարուցում վորպեսզի հնարավոր լինի մի ամբողջական փաստաթուղթ տալ՝ համաշխարհային կացությունն ընդգրկելու համար։

Կոմինտերնը ստեղծել է մի ծրագրային մեծ հանձնաժողով, վորի կազմի մեջ մտնում են միջազգային բանվորական շարժման լավագույն ուժերը և ուրտեղ, մենք հուսով ենք, ամենագործոն մասնակցությունը կունենա ընկ. Լենինը։ Դրանից զատ ծրագրային հանձնաժողովներ են ստեղծված և Կոմինտերնի արևմտյան խոշոր կուսակցություններին կից, ինչպես, որինակ. ֆրանսիական, գերմանական, իտալական, չեխո-սլովակյան կուսակցություններին կից։ Այնուհետև հատուկ հանձնաժողով է ստեղծված ճապոնական կոմունիստական կուսակցության վարքագիծն ու ծրագիրը ուրվագծելու համար։ Այդ հանձնաժողովում աշխատում են ճապոնական բանվորական շարժման ռահվիրան—Կատայաման, ընկ. Բուխարինը և մի շարք ուրիշ ընկերներ։

Մենք առանձին նշանակություն ենք տալիս ճապոնական կոմունիստական կուսակցության ծրագրի նախապատրաստական աշխատանքներին։ Հինգ տարվա ընթացքում մեզ համար չափազանց դժվար եր անմիջական կապ հաստատել ճապոնական բանվորական շարժման հետ։ Ճապոնական կառավարությունը չափազանց աչալրջությամբ և պաշտպանում իր յերկրի հանգիստը։

Յեվրոպացիներին, նույնիսկ վոչ կոմունիստներին, շատ դժվար է մտնել Ճապոնիա, և միմիայն մի քանի ամիս առաջ հաջողվեց Մոսկվայում ընդունել ճապոնական կոմունիստների և հեղափոխական սինդիկալիստների բազմամարդ պատվիրակությունը։ Սրանք բոլորն էլ աչքի ընկնող պրոլետարներ եյին, վոր մեծ փորձություններ ապրելով ճապոնական բանտերում, իրանց անցյալում հեղափոխական աշխատանքի տարիներ ունին։ Կոմինտերնի համար ճապոնական շարժումը վերին աստիճանի կարևոր է, վորովհետև այնտեղ մենք գործ ունենք միջազգային ոպպորտունիզմությունից դեռ չլքված հեղափոխական թարմ պրոլետարիատի կուսական մասների հետ։ Ճապոնիայում գոյություն ունի և ռեֆորմիստական թեևը, վորն ունի և բավականաչափ ուժեր, սակայն շարժումն, վերցրած վորպես մի ամբողջություն, թարմության և պրոլետարական յերիտասարդ ուժերի կենքն է կրում։ Ճապոնիան 1905 թվի նախորյակն է ապրում։ Ճապոնական կոմունիստական կուսակցությունը, վորը դեռ ևս բազմանդամ չէ, իր աղդեցությունը տարածում և ծավալում է որեցոր։ Բանվորական այս շարժումը դեպի իր կողմը պիտի հրավիրե ամբողջ աշխարհի առաջավոր պրոլետարների ուշադրությունը։

Այնուհետև կազմակերպված է ծրագրային մասնաժողով, վորը պիտի ներկայացնի ծրագրի նախագիծ, մի կողմից՝ բալկանյան կուսակցությունների և մյուս կողմից՝ սկանդինավյանների համար։ Մենք վերցրել ենք Յեվրոպայի յերկու անկյունը՝ բավական պատվարժան—իրանց չափերով և փոքր ինչ տարբեր՝ իրանց սոցիալական կառուցվածքով և այդ իսկ պատճառով՝ յուրահատուկ ձևով—տիպիկ։ Բալկաններում մենք կանդնած ենք հետևյալ կացության առաջ։ Բուլղարիայում մեր կուսակցությունը ներկայացնում է բանվոր դասակարգի գերաճնշող մասը և գյուղացիության նշանավոր քանակությունը։ Ուժերի փոխհարաբերությունը Բուլղարիայում այնպես է, վոր իշխանության փոխանցումն բանվորության ձեռքը այնքան էլ դժվար չեր լինի. գլխավոր դժվարությունը—Բուլղարիայի շրջապատումն է։ Հարավ-Սլավիայում մենք հզոր կուսակցություն ունեյինք, վորին սպիտակ տերորի միջոցով հաջողվեց ժամանակավորապես թուլացնել։ Հունաստանում ունենք յերիտասարդ և աճող կոմունիստական կուսակցություն, նրա կենտրոնական կոմիտեն պատերազմի դեմ մղած հերոսական պայքարի համար մոտ որերս ձերբակալված է։ Ռումանիայում մեզ հետ է կազմակերպված բանվորության մեծամասնությունը։ Այս բանն ապացուցեց և նախկին միացյալ կուսակցության համագումարը։ Սակայն ռումանական կառավարության գործադրած սպիտակ տերորը ժամանակավորապես կասեցրեց կուսակցության աշխատանքները։ Բալկանների այս հյուսվածքը հարկադրեց մեզ մտածել, վոր անհրաժեշտ է բալկանյան կուսակցություններին առանձնահատուկ ծրագիր տալ։

Այլ պայմաններում են գտնվում սկանդինավյան կուսակցությունները։ Այստեղ մեր ամենագորեղ վայրն է Նորվեգիան, ուր մենք ճնշող մեծամասնություն ունինք բանվորության մեջ, ուր մեր կողմից նվաճած արհմիությունները դուրս են յեկել ամստերդամյան միությունից և ուր բուրժուական կառավարությունը կախված է մեր կոմունիստական կուսակցությունից։ Նորվեգիան բանվորական շարժման մի յերկիր է, ուր արհմիությունն-

ները զգալի չափերով լավ տրադիցիաներ ունին։ Դժվար է ըմբռնել, թե Սկանդինավյան յերկրները համաշխարհային հեղափոխության նախապարկողները կլինին։ Նրանց դերն ուրիշ է և միաժամանակ-ընորոշ։ Այդ իսկ պատճառով Կոմինտերնը անհրաժեշտ է գտնում, որ սկանդինավյան կարևոր յերկրներից գոնե մեկն ու մեկի համար մշակվի հիմնավորված և ստույգ մի ծրագիր։ Ահա այն նախապատրաստական աշխատանքը, որ կատարված է ծրագրի մշակման համար։

Մենք հաշիվ ենք տալիս մեզ և գիտենք, որ աշխատանքը չափազանց դժվար է լինելու։

Վորպեսզի հիասթափություն չլինի հետագայում, մենք այս գլխից արդեն հայտարարում ենք, որ ծրագիր մշակելն այնքան դժվարին է և բարդ մի գործ է, որ յեթե 4-րդ կոնգրեսում մեզ հաջողվեց գոնե նախապատրաստական աշխատանքները գլուխ բերել, այդ էլ արդեն մի հսկայական քայլ կլինի դեպի առաջ։

Սկսած Կոմինտերնի 1-ին և 2-րդ կոնգրեսը մենք մեր տրամադրության տակ ունեցել ենք մի շարք փաստաթղթեր՝ բոլորովին ծրագրային բնավորությամբ։ Հիշեցեք, ընկերներ, «դեկտատուրայի և դեմոկրատիայի մասին» կազմած ընկեր Լենինի թեզիսները, որ նա ներկայացրեց 1-ին կոնգրեսին։ Սա արդեն հիմնական, նշանակալից և ծրագրային մի փաստաթուղթ է և վոչ միայն տակտիկական։ Կոմինտերնի գոյության տարիների ընթացքում այսպիսի փաստաթղթեր մի քանի հատ են ժողովվել։ Առայժմ մենք զիմում ենք այդ հիմնական փաստաթղթերի ամբողջացման աշխատանքին։ Այսպիսով մեր տրամադրության տակ առայժմ կան մի քանի անկյունաքարեր, վորոնցից և պետք է կազմենք մեր ծրագրային հիմքը։

Հիշեցեք, ընկերներ, թե վորքան աշխատանք տարված յեղանք թափելու մենք 1917-18 թվականներին, մեր սեփական ծրագիրը մշակելիս։ Վլադիմիր Իլյիչը նախաձեռնում էր մեզ վոր ավելորդ շտապողականություն ցույց չտանք և ծրագրի խնդիրն առաջարկում էր հետաձգել մինչև հետևյալ համագումարը։ Մինչդեռ այն ժամանակ խոսքը վերաբերում էր լոկ մեր յերկրին։ Իսկապես, մի յերկրի, վոր ներկայումս վճռող է, հեղափոխության և նրա կործանման մոմենտին, բայց և այնպես՝ մի յերկրի։ Այն ինչ, այժմ մենք պիտի ջանանք այնպիսի ծրագիր տալ, վոր կարողանա ամփոփել իրերի դրությունը վոչ միայն Բալկաններում և Սկանդինավիայում, վո՛չ միայն Ճապոնիայում և Ամերիկայում, այլ և մի շարք գաղութային և կիսագաղութային յերկրներում։

1003
74086
54131-66



## ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչ վերաբերում է արհմիություններին, այստեղ պետք է ասենք, վոր մինչև այսոր մենք կանգնած եյինք և շարունակում ենք կանգնած մնալ այն տեսակետին, որ անհրաժեշտ է պահպանել արհ-շարժման միակերպությունը միջազգային ամբողջ ասպարիզում։ Հեղափոխությունը հաղթականորեն առաջ վարելու համար, անհրաժեշտ է գրավել բանվորության մեծամասնությունը, իսկ բանվորության մեծամասնությունը գրավելու համար՝ անհրաժեշտ է գրավել արհմիությունների մեծամասնությունը։ Յեվ ահա այս աշխատանքին առանձնապես զգույշ և համբերությամբ պետք է մոտենալ։ Մենք յեղել ենք և այսոր էլ ենք այն տեսակետին, վոր արհմիությունական շարժման միակերպությանը հասնելու համար անհրաժեշտ է նվաճել արհմիությունները ասիճանաբար և՝ վորն կարևորն է, ներքուստ, ինչպես այդ վերջ ի վերջո կատարվեց և մեր յերկրում։ Քաղաքական շարժման մեջ բեկումն ու ջլատումները գոյություն ունեն Ռուսաստանում փաստապես 1903 թվականից, մեր կուսակցության 2-րդ համագումարից սկսած, մոտավորապես յերկու տասնյակ տարի յե, վոր տևում է քաղաքական բեկումն, մինչդեռ արհեստակցական շարժումը, թեև վորոշ անհաջողություններով, այնուամենայնիվ ընդհանրապես և ամբողջում յեղել է միակերպ։ Միավորված արհմիությունների մեջ Ռուսաստանում մենք ասիճանաբար մեծամասնություն ենք գրավում մեզ համար և հիմա արհմիությունները մեր կուսակցության հետ հավասար են շարժվում առաջ։

Մենք կարծում ենք, վոր Կոմինտերնը պիտի աշխատի միջազգային ասպարիզում ել ձգտել անցքերի նույնաձև զարգացման։

Բայց յես պիտի նախազգուշացնեմ մեր կուսակցությանը, վոր գործնականում այս խնդիրը այլ ձևով և դրվելու Կոմինտերնի առաջ։ Բանը նրանումն է, վոր մեր հակառակորդները—սոցիալ-դեմոկրատները 2 և 2½ կես Ինտերնացիոնալներից և Ամստերդամի Ինտերնացիոնալից—արհմիությունների մեր փոքրամասնության պահանջկոտության զորավորման զուգընթաց՝ ըսկսել են դիմել արհմիությունների ներսում քայքայման և ջլատման գործելակերպին։

Յեթե դուք նույնիսկ մակերևույթորեն եք հետևում թերթերին, այնուամենայնիվ տեսած կլինեք, վոր Ֆրանսիայում, Գերմանիայում, Չեխո-Սլովակիայում և Իտալիայում մեր հակառակորդները սկսել են արդեն հեռացնել կոմունիստներին ընդհանուր արհմիություններից։ Ամեն տեղ, ուր մենք քիչ թե շատ նշանավոր ուժ եյինք սկսել դառնալ՝ նրանք սկսել են մեր կող-

ճակիցներին արտաքսել արհմիություններից։ Ֆրանսիայում նրանք արդեն գործը հասցրել են կատարյալ պառակտման, այնտեղ արդեն գոյություն ունի յերկու ֆեդերացիա,—ռեֆորմիստական և ունիտար (կոմունիստական-սենդեկալիստական)։ Գերմանիայում մեր թշնամիները սկսել են արտաքսել կոմունիստներին այն արհմիություններից, ուր մենք արդեն ուժ եյինք սկսել դառնալ և ուր արդեն մոտիկ եյինք այն իրադրության, վոր կարող եյինք օրինական ճանապարհով գրավել տեղերի կեսը կամ մեծամասնությունը։ Կես տարվա ընթացքում տեղի ունեցավ այդպիսի արտաքսումների մի ամբողջ համաճարակ։ Վերջին ժամանակներս այդ պատերազմը փոքր ինչ դանդաղեց, սակայն Գերմանիայում, ուր բանն արդեն այնտեղ է հասել, վոր մենք կարող ենք գրավել մի քանի արհմիությունները, 2 և 2 ու կես-րդ Ինտերնացիոնալները զորեղացնում են պառակտումն, քանի դեռ չեն կորցրել այն չնչին ու թույլ մեծամասնությունը, վորից դեռ կախված է նրանց բախտը։

Զափազանց սուր է դրությունը այս տեսակետից Չեխո-Սլովակիայում, ուր մենք քաղաքականապես արդեն հաղթող ենք յերեք քառորդի սահմաններում և ուր արհմիություններում մենք արդեն մոտ ենք մեծամասնության գրավման և նրա ամրապնդման։ Այնտեղ մենք կարող ենք մեծամասնությունը գրավել համապատասխան չափով և այդ պատճառով Ամստերդամի Ինտերնացիոնալը սկսել է արդեն դուրս գցել կոմունիստներին այն արհմիություններից, ուր դեռևս մեծամասնություն են ներկայացնում 2 և 2 ու կես-րդ Ինտերնացիոնալների համախոհները։ Նույնպիսի դրություն է այժմ և Իտալիայում, ուր նման քայլ են պատրաստվում անել ռեֆորմիստները։ Նման գործելակերպը անհրաժեշտորեն պահանջում է, վոր մենք ել վորոշ փոփոխությունների յենթարկենք մեր գործելակերպը։

Մենք կողմնակից ենք արհմիությունների միակերպության և պետք է պայքարենք այս ուղղությամբ, բայց այն դեպքերում, յերբ մենք արտաքսված ենք լինելու, մենք կամ պետք է կազմակերպենք մեր կողմնակիցներին և տանք նրանց կենտրոնացման մի վորոշ կետ, կամ՝ պիտի մնանք ցրված։ Իսկ 2 և 2 ու կես-րդ Ինտերնացիոնալների ղեկավարների հաշիվն ել հենց այդտեղ է, վոր մենք միակերպության կողմնակից լինելով հանդերձ, կվախենանք առանձին առանձին կազմակերպել մեր արտաքսված ընկերներին։ Այդ իմաստով, ընկերներ, 4-րդ Կոնգրեսը պիտի դուրս բերի չափազանց պատասխանատու մի վորոշում։ Արհմիությունների խնդիրը-հիմնական մի խնդիր է։ Արհմիությունները-այդ մեր գլխավոր մասան է, մեր ծանր հետևակ զորքը, մեր բանվորների միլիոններն ու տասնյակ մի-



լիոնները, վոր պիտի գան ու վճռեն գործի յելքը։ Ով ունի իր տրամադրության տակ արհմիությունները՝ նա ունի և բանվոր դասակարգը, նա ունի ամենը։ Առանց արհեստակցական շարժման ղեկավարների ոժանդակության բուրժուազիան այլևս վոչ մի տեղ չէ կարող կառավարող հանդիսանալ։ Այնպես վոր, արհմիությունների հարցում ամենաչնչին գործելակերպային փոփոխումներն անգամ հսկայական հետևանքներ կարող են ունենալ։

## ԿՈՆԳՐԵՍԻ ՈՐԱԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ Է ԼՐԱՑՎԵԼ

Ահա, ընկերներ, այն ամենակարևորն, ինձ թվում է, ինչ կարելի յե նախատեսել սկզբունքային խնդիրների շարքից 4-րդ Կոնգրեսում։

Հարկավ, անցքերն այնպիսի արագությամբ են զարգանում, վոր մնացած ժամանակը կարող է մեզ առաջադրել ելի մի շարք ռազմական խնդիրներ։ Մերթ ընդ մերթ մեզ թվում է, թե անցքերը չափազանց դանդաղ են շարժվում։ Մինչդեռ փաստապես, օբյեկտիվորեն նայելով դրությանը, այդ այդպես չէ։ Մենք փոքր ինչ նմանվում ենք այն ճանճին, վոր պտտվում է հսկայական ջաղացքարի վրա և բնավ չի նկատում նրա պտույտը, մինչդեռ ջաղացքարը պտտվում է։ Ճիշտ նույն բանն է կատարվում և միջազգային անցքերի հետ։ Իրապես, այս 4—5 տարվա ընթացքում մենք այնքան ենք ականատես յեղել հսկայական շարժումների, վոր մեր ուշադրությունը գրավելու համար հարկավոր են ավելի ևս հոյակապ անցքեր։ Մինչդեռ այն ամենը, ինչ ներկայումս կատարվում է միջազգային ասպարիզում՝ բավական արագաշարժ անցքերի մի պատկեր է։ Յեթե, յենթադրենք, ինտուիցիոնական թվականներին ընտրական ընդհանուր իրավունք ձեռք բերելու համար բելգիական մի վորևե գործադուլը միջազգային առաջնակարգ մի յերևույթ եր դառնում, վորի մասին խոսում ու գրում եյին ամբողջ հինգ տարի և վորի մասին արտահայտվել է Ռոզա Լյուքսեմբուրգը, ապա չափազանցություն չի լինի ասել, վոր հիմա ամեն մի ժամվա ընթացքում տեղի յեն ունենում այնպիսի անցքեր, վորոնք իրանց պատմական և տեսակարար քաշով հարյուր անգամ ավելի խոշոր են, քան բելգիական գործադուլը։ Սակայն մենք այդ յերևույթներին հիմա վերաբերվում ենք ավելի պակաս ակտիվությամբ, քան իր ժամանակին բելգիական գործադուլին։

Միջազգային պրոլետարիատի ախորժակը մեծացել է։ Մի հաղթական հեղափոխություն պրոլետարիատն արդեն անցկացրեց։ Մենք ապրում ենք միջազգային հեղափոխության շրջաններում,—այստեղ է ամբողջ գաղտնիքը։ Ահա թե վորտեղից է այն տպավորությունը, թե անցքերը չափազանց դանդաղ են

զարգանում։ Սուբյեկտիվորեն այդ շատ հասկանալի է, բայց օբյեկտիվորեն՝ այդպես չէ։ Ցեվ պետք է ասել, որ այդ առթիվ բուրժուազիայի սուբյեկտիվ տրամադրությունները այլ են։ Նրանք կարծում են, որ անցքերը չափազանց արագ են ծավալվում։ Ցեվ զարմանալի չի լինի, եթե այս ժամանակամիջում էլ անցքերը զարգանան նույն թափով և մեր 4-րդ Կոնգրեսի որակարգը լրացվի նոր կետերով։ Եթե այդ չը կատարվի, մենք կը մնանք մեր նշանակած՝ չափազանց կարևոր խնդիրների շրջանակներում։

**Կապը հաստատված է**

Բացի ընդհանուր հարցերը, 4-րդ Կոնգրեսում քննության են առնվելու և մի քանի ուրիշ հարցեր, որոնք վերաբերվում են առանձին սեկցիաների և առանձին յերկրների։ Մենք կարող ենք հիմա հմուտ և կոնկրետ կերպով ծանոթանալ ամեն մի առանձին և խոշոր յերկրի դրության և բանվորական շարժման հետ։ Մեր կապը առանձին սեկցիաների հետ այս տարի արդեն հաստատված է։ Այս տարվա ընթացքում մենք յերկու լայնացրած նիստ ենք ունեցել Կոմինտերնի Գործադիր Կոմիտեում։ Մենք մի նոր ձև ենք գտել կազմակերպչական աշխատանքների համար և չորրոդ Կոնգրեսը պիտի հաստատի այդ ձևը։ Կոմինտերնի Գործադիր Կոմիտեի սովորական նիստերից զատ, որին մասնակցում են տեղումս ապրող և մշտապես փոփոխվող 25—30 անդամ, հավանորեն, մենք կունենանք տարենը մի-յերկու անդամ Գործադիր Կոմիտեի և լայնացրած նիստեր, որոնց պիտի մասնակցեն և կուսակցությունների այլ յերկրներից յեկող դեկավար ներկայացուցիչները։ Փաստորեն այդ նիստերը վերածվելու են փոքրիկ կոնգրեսների, որոնք յերբեմն ավելի խոշոր նշանակություն են ունենալու, քան ընդարձակ կոնգրեսները։

Մեր կապը առանձին սեկցիաների հետ կանոնավորված է։ Գոյություն ունի արդեն բանվորության խիստ յեղբայրություն, որ ոչ միայն յերդումներ և տալիս հավատարմության, այլև փաստապես ընդհանուր և կարևոր գործ և կատարում։ Շուտով մենք կարող կլինենք ասել առանց պարծենկոտության, որ ունենք կոմունիստական կուսակցությունների միջազգային կենտրոնական կոմիտե։ Այս հենց այն խնդիրն է, որին մենք ձգտել ենք մի քանի տարիների ընթացքում և որի լուծմանը մենք կհանգենք ամենամոտիկ ապագայում։ Ցեվ այս հանգամանքը հնարավորություն է տալիս առանձին և խոշորագույն կուսակցությունների խնդիրները 4-րդ Կոնգրեսին դնել բոլորովին պարզ ու կոնկրետ ձևով։

Որքան կարելի է նախատեսել, առաջին հերթին Կոնգրեսը զբաղվելու է յերեք խոշոր կուսակցություններով, կամ ավելի ճիշտ ասած՝ յերկուսովը—իտալական և ֆրանսիական և մասամբ, գուցե, գերմանական կուսակցության խնդրով։

**Իտալիա**

Ինչ վերաբերում է Իտալական կոմունիստական կուսակցությանը,—հենց մոտ որերս այնտեղ սպասվում են խոշոր նշանակություն ունեցող անցքեր։ Անկասկած է, որ մեր կուսակցության զարգացման ընդհանուր ընթացքն Իտալիայում մեծապես կախված է Իտալիայի քաղաքացիական պայքարից։ Իտալիայի դրությունը հեղափոխական է։

Քաղաքացիական պայքարն Իտալիայում հարատև է։ Այնտեղ մենք գործ ունենք բանվորների և ֆաշիստների պայքարի հետ։ Իտալիան մի յերկիր է, ուր մենք հանդիպում ենք ընդհանուր գործադուլային շարժման գրեթե ամեն մի չորս շաբաթը։ Իրական հեղափոխական շարժումն այնտեղ զորեղացել է։ Այնտեղ մենք ապրեցինք Սերրատիի ահռելի դավաճանությունը իր խմբակի հետ միասին, որն առաջ մտնում էր Կոմինտերնի մեջ։ Հետո, յերբ հեղափոխական ալիքն ընկավ, նա փորձեց դուրս գալ Կոմինտերնից, այսինքն, յեթե բանը նրան գար, նա ուզում էր մնալ, բայց մենք նրան դուրս ձգեցինք, որովհետև նա չկատարեց Կոմինտերնի ծրագիրը։ Նա ավելի նախադասեց մենշևիկների հետ միանալ, քան կոմունիստների։ Զանցավ մեկ տարի՝ և մենք հասանք բարոյական հզորագույն հաղթանակի։ Ցեվ սրանից այնքան էլ վոչ շատ վաղուց Սերրատին հարկադրված էր հրապարակորեն հայտարարել, որ իր կյանքի ամենամեծ սխալն է համարում իր այն վարմունքը, յերբ նա Լիվորնոյի համագումարում ռեֆորմիստների հետ միասին դուրս յեկավ մեր դեմ։ Նրա ֆրակցիան հրապարակեց մի պաշտոնական հրավարտակ, որի մասին յես առիթ ունեցա գրելու մեր մամուլի եջերում, ուր նույն մտքով արտահայտվեց և մաքսիմալիստների ֆրակցիան։

Սեպտեմբերի 8-ին կայանալու է այդ կուսակցության համագումարը։ Սերրատին դեռ ևս շարունակում է մնալ ռեֆորմիստների հետ, սակայն պառակտումն այնտեղ անխուսափելի է վորովհետև ռեֆորմիստները կազմել են սեփական կենտրոնական կոմիտե և ունեն սեփական մամուլ։ Պառակտումն անխուսափելի է հենց այն գծով, որով սրանից մեկ տարի—տարի և կես առաջ Կոմինտերնը էր առաջարկում կատարել։ Թող իտալական այս դասը ապարդյուն չանցնի միջազգային հեղափոխական ամբողջ շարժման համար։ Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես մի ամբողջ կուսակցություն զարգացման մի լիակատար

շրջան անցավ և ամբողջապես արդարացրեց մեր տեսակետը։

Իտալիան մեծ յերկիր է։ Իտալիայի օբյեկտիվ գրությունը հեղափոխական է և Իտալիայում տեղի ունեցող անցքերը ինքն ըստ ինքյան հսկայական նշանակալից են։ Այդ անցքերը առանձնապես կարևոր են հենց այն պատճառով, վոր իտալական շարժման ճգնաժամը պարփակում եր իր մեջ միջազգային յերևույթի համար հատկանշական բոլոր գծերը։ Ավել թե պակաս չափով բոլոր յերկրներում էլ այս կամ այն ձևով բանվորական շարժումը այս վերջին տարիների ընթացքում ապրում եր նույն ճգնաժամը, ինչ վոր ապրեց բանվորական շարժումն Իտալիայում։ Յեվ Իտալիայի փորձը դասական պարզությամբ և ակներևությամբ ցույց տվեց բոլորին Կոմինտերնի տակտիկայի ան սխալականությունը և հասկացրեց հեղափոխության բոլոր անկեղծ կողմնակիցներին, վոր նրանք պետք է բաժանվեն իրանց մենշևիկներից և վոր՝ ուրիշ ճանապարհ չկա։ Կոմունիստական կուսակցությունը Իտալիայում հաստատվեց է։ Սերրատիի այժմյան կուսակցության մեջ ձախ թևի ղեկավարն է դարձել Մաֆֆին։

Մի քանի որից մենք կանգնած կլինենք պատակտման օբյեկտիվ փաստի առաջ. մենք ականատես կլինենք, թե ինչպես «մաքսիմալիստները» կբաժանվեն ռեֆորմիստներից և այնուհետև մաքսիմալիստներից շատերին կարելի կլինի վերադարձնել Կոմինտերնը։

Իտալական հարցը չափազանց զբաղեցրեց մեզ 3-րդ Կոնգրեսի ժամանակ։ Ուշադրություն կդրավի նա և հիմա, 4-րդ Կոնգրեսին։ Յեվ նա, ով կհամագրի այդ յերկու կոնգրեսներին տեղի ունեցած վիճաբանությունները այդ խնդրի շուրջ, ով նրանց կուսումնասիրի՝ նա մի լավ առարկայական դաս կստանա միջազգային կոմունիստական ստրատեգիայի մասին և նա բանվորական շարժման այդ հոյակապ որինակից արդեն կհամոզվի թե վորքան ճշմարիտ են Կոմինտերնի սկզբունքները։

**ՖՐԱՆՍԻԱ.**

Չորրորդ կոնգրեսին նշանավոր տեղ է գրավելու նաև ֆրանսիական բանվորական շարժման խնդիրը, հավանորեն նույնքան նշանավոր տեղ, վորպիսին 3-րդ համագումարին՝ գերմանական բանվորական շարժման խնդիրն եր գրավում։ Մեր կուսակցությունը Ֆրանսիայում սոցիալ-դեմոկրատների կուսակցության համեմատությամբ հսկայական մեծամասնություն ունի։ Բայց և այնպես այնտեղ նա դեռ տառապում է այն հիվանդությունից, վորի մասին մեզ վիճակվեց մոտերս պարզաբանություններ տալ մեր՝ «Կոմունիստական կուսակցության ծնունդը» հոդ-



վածում։ Այդ կուսակցությունն ունի իր կենտրոնական որգանը «Յումանիտե» անունով և որեկան 200,000-ի հասնող տիրաժով։ Բացի այդ Փարիզում ունի և ամենորյա յերեկոյան լրագիր։ Կոմունիստական է անվանել նա իրան սրանից տարի և կես առաջ։ Յեվ այնուամենայնիվ մենք ասում ենք, վոր այնտեղ դեռ նոր է կատարվում ծնունդը Կոմունիստական կուսակցության։ Այնտեղ դեռ ամեն ինչ չէ կարգավորվել։ Պառակտումը, վոր այնտեղ կատարվեց՝ դեռ վերջնական չէ։ Դեռ բարրիկադների յերկու կողմերն՝ էլ մնացել են առանձնացած և պատահական խմբակներ և նրանք դեռ չեն գտել իրանց իսկական տեղն ու կոչումը։ Ժորեսիզմի ավանդները դեռ լիակատարապես մարսված չեն կուսակցության կողմից։ Ժորեսի մասին այսոր շատ ճիշտ եր նկատված, վոր հրաշունչ հռետորի և բանվորական շարժման հանդեպ ունեցած հսկայական ծառայությունների հետ միասին նա ուներ և խոշորագույն պակասություններ և իր սեփական «աչն ու ականը» (десница и шуйца)։ Ֆրանսիայի Կոմունիստական կուսակցությունը դեռ չէ դուրս յեկել Ժորեսիզմի թույլ կողմի ազդեցության շրջանից։ Նրա մեջ դեռ զրեղ են պացիֆիստական ավանդները։ Յեվ դեռ կենդանի յեն նրա մեջ կիսանիշխանական ու կիսասինդիկալիստական ավանդները նրա մեջ դեռ տեղ ունեն հսկայական տատանումներ՝ սկսած տոլստոյականության տիպի պացիֆիզմից մինչև ֆրազյոլոգյան սինդիկալիստական տիպի։ Կուսակցությունն ապրում և իր կենտկոմի հարատև ճգնաժամը։ Նա դեռ չի յել շոշափել սեփական կուսակցության ղեկավար մարմնի դլուխը և դեռ չունի իր համար ղեկավարող մարմին։ Սա մի խնդիր է, վորին մենք, ավաղ, դեմ ենք առնում Կոմինտերնի գրեթե բոլոր խոշոր սեկցիաներում։ Յեվ սա խոշոր խնդիր է, վոր այսոր կանգնած է հերթի կոմունիստական կուսակցություններում։ Կան խոշոր կուսակցություններ, վորոնք կազմակերպված պրոլետարների քանակի տեսակետից նույնքան բարդ են, վորքան և ռուսական Կոմունիստական կուսակցությունը։ Կա որինակ, չեխո-սլովակյան կուսակցությունը, վոր հաշվում է ավելի քան 350,000 անդամ։ Կա գերմանական կուսակցությունը, վոր ունի մոտ 300,000 անդամ։ Յեվ կուսակցության ղեկավարության խնդիրը գրեթե բոլոր յերկրներում ամենագործնական խնդիրն է համարվում։ Բուրժուազիան ջարդել է կոմունիստական ղեկավարների մի մասը, ինչպես, որինակ, Գերմանիայում. մասամբ էլ այդ ղեկավարները դեռ չեն կերպարանավորվել։ Չի՛ կազմվել, չի՛ ձևակերպվել և չի կատարվել դեռ այդ բնական ընտրությունը։ Բանվոր դասակարգը դեռ չի շոշափել իր իսկական ղեկավարներին։ Իսկ հին

ղեկավարները բոլորն էլ անցել են 2 և 2 ու կես Ինտերնացիոնալները։ Ղեկավարության խնդիրը Ֆրանսիական Կոմունիստական կուսակցության մեջ ամենակարեվորն է գործնական խնդիրների շարքում։ Անցքերի ընթացքով և հեղափոխության զարգացմամբ ղեկավարները դուրս են գալիս բանվորության միջից Ներկայումս այդ պրոցեսը դեռ շատ հետու չէ ավարտված լինելուց։

Յեվ մասնավորապես Ֆրանսիական կուսակցության մեջ այդ ճգնաժամը դեռ չափազանց իրական է։ Բավական է ասել, վոր սրանից ութն ամիս առաջ կուսակցության ձախ թևը արեց հետևյալ առաջարկությունը.—չի կարելի ունենալ կենտկոմ, վոր կազմված լինելով 25 հոգուց, ժողովի շաբաթական մեկ անգամ, այլ պետք է ստեղծել մի մշտական կորիզ, նախագահություն կամ բյուրո, վորը մշտապես ղեկավարե կուսակցության աշխատանքները և նրա անդամները ուրիշ վոչ մի գործ չպիտի ունենան հեղափոխական աշխատանքից զատ։ Այս հոդի վրա հակայական բանավեճեր ծագեցին, մատնացույց եյին անում, վոր այս—միապետական սկզբունք է և վոր այս բանն իրը թե հակասում է դիմոկրատիզմին և այլն։ Բավական է բերել և մի ուրիշ որինակ—Սենայի Ֆեդերացիան։ Սենայի Ֆեդերացիան՝ այդ Փարիզն է։ Փարիզը Ֆրանսիայում դեռ շարունակում է կատարել ավելի խոշոր դեր, քան մեզանում Մոսկվան և Պետրոգրադը։

Փարիզն—ամեն ինչ է։ Մենք գիտենք այդ Փարիզյան Կոմունայի պատմությունից։ Սենայի Ֆեդերացիան մեր կուսակցության համար հսկայական նշանակություն ունի, ինչպես և մեր կուսակցության կազմակերպչական խնդիրներում։ Յեվ այս Ֆեդերացիայի հետ մենք դիսկուսիա յենք վարում։ Ընկեր Տրոցկին մի շարք հոդվածներ և նամակներ գրեց այս առթիվ։ Սենայի Ֆեդերացիայի մի քանի լավագույն բանվորները կանգնած են այն տեսակետին, վոր կազմակերպությունը պիտի կառուցվի ֆեդերատիվ սկզբունքներով։ Նրանք ուզում են 100 հոգուց բաղկացած կենտկոմ ունենալ և այնպես, վոր նրանք ֆեդերատիվ սկզբունքով աշխատեն։ Յերբ մենք ասում ենք նրանց, վոր այդպես չի կարելի, այն ժամանակ այն լավագույն բանվորներից վոմանք առարկում են մեզ թե՝ ապա այդ ինչպես է, վոր ձեզանում կա Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն։ Խորհրդային հանրապետությունը,— չէ՞ վոր այդ ամենագեղեցիկն է այն ամենից, ինչ վոր դիտե մարդկությունը։ Այնպես չէ,—ասում են նրանք։ Յեվ յեթե ձեր հանրապետությունը կազմված է ֆեդերատիվ սկզբունքով, ապա ինչու մեր Սենայի կուսակցական ֆեդերացիան չպիտի կազմենք



նույն ֆեդերացիայի սկզբունքով։ Յեվ մենք հարկադրված ենք ընկերական դիսկուսիայի կարգով զրուցել նրանց հետ և ցույց տալ, վոր մեծ տարբերություն կա պետության և կուսակցության մեջ։ Ունենալով իրանց անցյալում Փարիզի Կոմունայի փառավոր պատմությունը, նրանք այնուամենայնիվ, դեռ չեն կարողանում ըմբռնել այդպիսի յերևույթները, դեռ չունին անհրաժեշտ փորձառությունը և մենք ստիպված ենք հասկացնել նրանց նույնիսկ այսպիսի արմատական խնդիրները։

Վոչ այնքան վաղուց մենք կարծում եյինք, թե Ֆրանսիական կուսակցությանը վիճակված է չափազանց յերկարատև մի ճգնաժամ ապրել, Ֆրանսիական կուսակցության մի մասը տրամադրություններ է ցույց տալիս թեքվել դեպի աջ։ Այս պացիֆիստական և կիսանիշխանական տարրերն են։ Նրանք ցանկանում են միակամ ոպոզիցիա ստեղծել ընդդեմ Կոմինտերնի։

Վերջին շաբաթները մենք նկատում ենք մեր մեջ մի համոզում, վոր Ֆրանսիական կուսակցությանը դուցե հաջողվեց դուրս յելնել ճգնաժամից և առանց կարևոր ցնցումների։ Ֆրանսիական կուսակցության կենտրոնական կոմիտեի մի շարք անդամների հետ ունեցած մեր զրույցներից հետո, մենք մեծ վստահություն ունենք, վոր այդպես էլ լինելու յե։ Մեզ մոտ յեղան կենտկոմի պատասխանատու ղեկավարներից 9 հոգի։ Յեվ մենք շատ ենք հավատում, վոր Ֆրանսիական կուսակցությանը կհաջողվի արագությամբ դուրս յելնել ճգնաժամի ցանցերից և հարթել այն խորտ ու բորտերը, վոր այժմ գոյություն ունին։ Համենայն դեպս 4-րդ կոնգրեսում մենք առաջին անգամն ենք դնելու Ֆրանսիական կոմունիստական կուսակցության խնդիրը։

Անցյալ տարի Կոմինտերնի Կոնգրեսի ժամանակ Ֆրանսիական կուսակցությունը դեռ չափազանց թույլ եր և Կոնգրեսը խնայում եր այդ փխրուն արարածին։ Ֆրանսիական կուսակցությունը սկզբունքային տեսակետից դեռ չափազանց թույլ եր, վորպեսզի հնարավոր լիներ քննադատության հրացանցի մեջ դցել նրան։ Այժմ մենք շիտակորեն հայտարարում ենք Ֆրանսիական ընկերներին.—հիմա դուք հասունացել եք արդեն և վաստակել եք արդեն իսկական քննադատության յենթարկվելու, ինչպես և միջազգային կոմունիստական կոնգրեսի քննադատության բովից անցնելու իրավունքը, ճիշտ այնպես, ինչպես այդ տեղի ուներ անցյալ տարի ավելի զորեղ կուսակցությունների հետ։ Այս տեսակետից կարևոր տեղ և հատկացվելու 4-րդ Կոնգրեսում Ֆրանսիական կոմունիստական կուսակցությանը։

Մենք գիտենք, վոր Ֆրանսիան միջազգային մի հսկայական ասպարեզ է, վոր խոշորագույն նշանակություն ունի քաղաքական տեսակետից և վոր նա համաշխարհային հակահեղա-

փոխության իսկական ընույթն է և միջազգային իմպերիալիզմի գլխավոր հենը։ Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունը միջազգային կոմունիզմի մեջ ամենապատասխանատու տեղերից մեկն է գրավում։ Ահա թե ինչու ֆրանսիական կուսակցության բախտը հսկայական նշանակություն ունի վոչ միայն Կոմունիստական Ինտերնացիոնալի նեղ շահերի տեսակետից, այլև համաշխարհային պատմության համազարգացման տեսակետից։ Այս իմաստով ֆրանսիական կուսակցությունը ամենակարևոր տեղումն է կանգնած։ Ֆրանսիական կուսակցությունն ունի իր ազդեցիկ լրագիրները, իր յերկրում ունի բանվոր դասակարգի համակիր մեծամասնությունը, և սակայն նրան պակասում է կազմակերպչական փորձառությունն ու սկզբունքային կայունությունը։ Ֆրանսիական ընկերները անկեղծ ցանկություն ունին Կոմունիստական Ինտերնացիոնալի ճանապարհով գնալու։ Այս տեսակետից հարկ չկա վոչ մի զուգահեռական անցկացնելու նրանց և Սերբատիի կուսակցության միջև։ Բայց չափազանց ծանր ավանդներ են մնացել նրանց՝ վորպես ժառանգություն ֆրանսիական պարլամենտարիզմից։ Իմպերիալիստական պատերազմի ընթացքում վոչ մի տեղ կարմիր դրոշակն այնքան ստորացված չեր, վորքան Ֆրանսիայում։

Ահա թե ինչու մեր բանվորական շարժումը այնպիսի դժվարություններով և Ֆրանսիայում դուրս գալիս իսկական ճանապարհի վրա։ Բայց և ավելի խոշոր կլինի Կոմինտերնի ստացած պարգևատրությունը, յերբ նրան հաջողվեց այդ կարևորագույն զորամասը կարգավորել և դնել հարկավոր յերկաթգծերի վրա։ Ցեվ այս տեսակետից 4-րդ Կոնգրեսի խնդիրները հսկայական են լինելու։

### Գերմանիա

Գերմանական կոմունիստական կուսակցությունը, վոր Կոմինտերնի մեջ մտնող խոշորագույն կուսակցություններից մեկն է, արդեն դուրս է յեկել ճգնաժամից։ 3-րդ Կոնգրեսի ընթացքին նա ամենազորեղ դիսկուսիայի ամենագլխավոր առարկան եր։ Այս ժամանակամիջոցում նա ամենասուր կրիզիսն ապրեց, նա դուրս քշեց իր շարքերից Լևվիի կողմակիցների խմբակը։ Վոչ ավել, քան մի տարի առաջ, մենք դեռ վիճում էյինք, չթողնե՞լ արդեոք Լևվիին Կոմունիստական Ինտերնացիոնալում։ Ցեվ մենք, ռուսական կոմունիստներս ել, այդ հարցի առթիվ տարբեր կարծիքներ ունեյինք։ Իսկ այժմ Լևվին պատկանում է անկախների կուսակցության, ավելին կասենք,—նա անկախների այն խմբակի նախաձարկողն է, վորն առաջարկում է անքողարկված բլոկի մեջ մտնել Շայդեմանի հետ։ Ահա թե ինչպիսի արագությամբ են ծավալվում անցքերը։ Գերմանական Կոմունիստական կուսակ-



ցությունը իր միջից դուրս է շպրտել բոլոր հիվանդոտ և կիսառեֆորմիստական տարրերը։ Մի տարվա ընթացքում նա ապրել մի շարք, մի հսկայական քանակ կարևորագույն անցքեր է մասայական գործադուլային շարժումների, բանվորական ցույցերի, արյունհեղության և այլն։ Գերմանական կուսակցությունն այսոր բարեհաջողության լավագույն ճանապարհին է կանգնած։ Դուք ընդհանրապես հետևում եք գերմանական ծավալվող անցքերին, հավանորեն ավելի, քան մյուսներին։ Այդ պատճառով յես թույլ կտամ ինձ մանրամասնությունների վրա կանգ չառնել։ Այժմ, յերբ անկախները միաձուլվում են շայդեմանականներին, առաջին հերթին թվում եր թե դա հսկայական պլյուս է։ Չէ՞ վոր բոլորին ել թվում եր վոր պարզ է. անկախները դավաճանեցին հեղափոխության շահերին։ Սակայն բախտի խաղն այնպես է, վոր սկզբի համար այդ յերևույթը վորոշ դրական արդյունք տվեց 2 և 2 ու կեսական ինտերնացիոնալներին։ Նրանք բանը ներկայացնում են այսպես, թե ահա հիմա կլինի մեկ կուսակցություն, մեկ միություն և մենք իրը սիմելու յենք բուրժուազիային։ Բայց շատ-շատ անցնի մի կես տարի, և բոլոր այն բանվորները, վորոնց գրավեց այդ միավորման կատակերգությունը, կտեսնեն, վոր անկախները ամբողջությամբ ծախեցին իրանց հոգին Շայդեմանին և այսպիսով գնացին բուրժուազիայի հետևից։ Այնուամենայնիվ կոմունիստական կուսակցությունը Գերմանիայում որեցոր զորեղանում և ծավալվում է։ Հսկայական և իրական հաղթանակներ է տանում նա արհմիությունները (թվերը հայտնի յեն մեզ թերթերից)։ Գերմանական մի շարք միություններում նա մոտ է արդեն կեսին և մի շարք ուրիշ կարևորագույն միություններում նա ունի արդեն լուրջ փոքրամասնություն։ Մենք համոզված ենք, վոր մոտավոր ապագայում գերմանական կոմունիստական կուսակցությունը ըստիպված է լինելու արձակել հետևյալ լոզունգը.— «Կուսակցության մեկ միլիոն անդամ»։ Գերմանիայի կոմունիստական կուսակցության անդամներից վոմանք, վորոնց հետ մենք առիթ ենք ունեցել խոսել, գտնում են, վոր նրանց բնավ հարկավոր չէ այդքան անդամ ունենալ։ Նրանք ասում են. հեղափոխությունից առաջ ձեզ մոտ, Ռուսաստանում ել ընդամենը 250,000 անդամ կար, գուցե և ավելի պակաս, ինչներիս է պետք մեզ Գերմանիայում միլիոնը, յերեք հարյուր հազարն ել լավ է...

Իմ կարծիքով, այս դատողությունը սխալ է։ Ի հարկե անպատրաստ տարրերի սովորական կուտակումն մեզ հարկավոր չէ։ Սակայն Գերմանիայում այդ չի յել կարող լինել։ Այնտեղ այնքան ել հեշտ չէ գրավել մի կուսակցության մեջ մեկ կամ նույն-

իսկ կես միլիոն անդամ։ Այնտեղ ամեն մի բանվոր նախքան այս կամ այն կուսակցության անդամագրվելը, դեռ մի քանի անդամ պիտի չափի ու ձևի։ Եթե խնդիրը լիներ այն մասին, թե վորևէ անցքերի ազդեցության տակ սկսվեց մասսայական մի հոսանք անպատրաստ տարրերի կողմից դեպի կուսակցությունը, մեզ այդ պետք չէ,— զգացմունքի ազդեցության տակ մենք հանդես կգայինք դրա դեմ։ Բայց այնտեղ այդ չի կարող լինի, այնտեղ մարդիկ այնպիսի խմորից չեն շինված, այնտեղ կա կազմակերպչական հսկայական մեխանիզմների կառուցվածք և համառագույն պայքար։ Այնտեղ շայդեմանականները միանում են անկախներին և փաստորեն անցնում են միապետականների բանակը։ Այնտեղ վորպես սկզբնավորում կարող է լինել թեև դանդաղ, բայց բանվորության գիտակցական փոխադրումն մեր շարքերը։ Այնտեղ իսկական պայքար է լինելու՝ մեկը կազմակերպված սոցիալ-դեմոկրատական մեքենայի և մյուսը—կոմունիստական մեքենայի միջև։

Այո, ճիշտ է, հեղափոխության սկզբին մեզ մոտ կար միմիայն 200,000 անդամ, բայց մենք չունեցինք մեկ միլիոն անդամ ունեցող սոցիալ-դեմոկրատիա, մենք չունեցինք 8 միլիոն անդամ ունեցող արհմիություններ, վորոնք դանվեցին մենշևիկների ձեռքին։ Բանվոր դասակարգը մեզանում հեղափոխության կողմնակից էր։ Մենք նրա նախազարկողն եյինք և նրա ուղեղը։ Գերմանիայում այդ չի կարող լինել։ Եվ ահա թե ինչու այնտեղ 300,000 անդամն ավելի քիչ են քաշում փաստապես, քան մեզանում 200,000-ը, կամ նույնիսկ 100,000-ը հեղափոխությունից առաջ։

Ահա թե ինչու այնտեղ անհրաժեշտ է ոգտագործել մշակված հողը՝ հարյուրավոր նոր անդամներ գրավելու նպատակով։ Եվ գերմանական կուսակցության այդ կհաջողվի։ III Կոնգրեսից հետո անցած տարեշրջանի ընթացքում ամենախոշոր հաջողությունն է ունեցել Գերմանական Կոմունիստական կուսակցությունը։ III-րդ կոնգրեսի ժամանակ, մարտ ամսի ապստամբությունից հետո, յերբ արյան հեղեղների մեջ մեր ընկերներից շատերը խեղդամահ եղան, բանվորական շարժումն Գերմանիայում ապրում եր իր անկումային տրամադրությունները։ Մեր կուսակցությունը այստեղ նույնպես ապրում եր իր ճգնաժամը։ Այժմ կուսակցությունն այնտեղ ժայռի պես զորեղ է և սոցիալ-դեմոկրատական գերությունից ազատագրվող բանվորության ամբողջ համակրանքը գերմանական կոմունիստական կուսակցության կողմն է։ Ահա թե ինչու մեկ միլիոն անդամի վերաբերյալ լոզունգը ցնորանք (утопия) չէ և Կոմինտերնի 5-րդ համագումարին արդեն մոտ կլինի այն թվին, վոր յես այժմ անվանում յեմ։



Այսպիսով, խոշոր կուսակցություններից իտալականը, ֆրանսիականը և գերմանականը 4-րդ Կոնգրեսի հատուկ ուշադրությունն են գրավելու։ Ահա թե ինչպես է պատկերանում մեզ 4-րդ Կոնգրեսը։ Մանրամասնությունները վոչ վոք չի կարող դուշակել, իհարկե, սակայն ընդհանուր պատկերն այս է։

## 2 ՈՒ ԿԵՍՍԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Յես կանգ կառնեմ ևս մի խնդրի վրա։ Յերկու և կեսյերրորդ Ինտերնացիոնալը ապրում է մի ճգնաժամ, վորը և կվոչնչացնի նրան։ Եվ ահա թե ինչու։ Վերցրեք յերկու յերկիր. Գերմանիան և Իտալիան։ Եվ այդ որինակից դուք կտեսնեք թե բանն ինչումն է։ Գերմանիայում տեղի յե ունենում անկախների, այսինքն 2 ու կես ինտերնացիոնալի միավորումն շայդեմանականների, այսինքն 2 ինտերնացիոնալի հետ։ Նպատակը կոալիցիոն կառավարությունն է, ուր ուզում են մտնել անկախները։ Իտալիայում Սերրատին և նրա ընկերները, վորոնք մեկ վոտքով կանգնած եյին 2 ու կեսյերրորդ Ինտերնացիոնալում, գնում են ուրիշ ուղղությամբ։ Այնտեղ այդիսկ պատճառից առաջացել է պառակտում սերրատիստների և բեֆորմիստների միջև։ Սերրատիստները չեն ցանկանում կոալիցիա կազմել բուրժուական կառավարության հետ։ Այդ նշանակում է պառակտում և քայքայումն 2 ու կեսյերրորդ Ինտերնացիոնալի։ Մեզ համար պարզ եր, վոր 2 ու կեսյերրորդ Ինտերնացիոնալը լուրջ արմատներ չունի։ Նա կարող է գոյություն ունենալ մեկ, յերկու, գուցե հինգ տարի, բայց նա չունի լուրջ հենարան։ Նա ճահիճ է։ Կրկնում եմ, Իտալիայում, 2 ու կեսյերրորդ Ինտերնացիոնալի տարրերը նորից դառնում են դեպի մեզ և չեն ուզում կոալիցիայի մտնել բուրժուական կառավարության մեջ։

Գերմանիայում ընդհակառակն է,—այստեղ տեղի յե ունենում 2 ու կեսյերրորդ Ինտերնացիոնալի գլխավոր կուսակցության վոչընչացումն, ինչու համար։ Վորովհետև նրանք ցանկանում են կոալիցիա կազմել բուրժուական կառավարության հետ։ Դուք տեսնում եք, վոր նրանք վոչ տեր ունեն գլխներում և վոչ էլ ուղղություն և վոր չանալով գրավել միջին դիրքը՝ պատմականորեն դատապարտված են մահվան։ Եվ 2 ու կեսյերրորդ Ինտերնացիոնալի կործանման ժամն արդեն խփում է։

## 2-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Գլխավոր պայքարը մղվում է 2-րդ Ինտերնացիոնալի դեմ։ 2-րդ Ինտերնացիոնալը դեռ ուժեղ է։ Նա—բուրժուազիայի արտացոլումն է։ Այդ մենք տեսնում յենք ավելի քան առարկայորեն ես-երների պրոցեսից։ Յերբ տեղի կունենա 2-րդ և 2 ու կեսյերրորդ Ինտերնացիոնալների միավորումն, այն ժամանակ էլ

կգա ժամը մեր ծայր աստիճան համառ պայքարի 2-րդ Ինտերնացիոնալի դեմ։ Մոտավոր տարիները մենք պետք է պատրաստվենք այդ պայքարի համար։

**ՈՒԺԵՐՆ ԱՃՈՒՄ ԵՆ**

Ընդհանրապես և ըստ ամբողջի Կոմունիստական Ինտերնացիոնալը հսկայական նվաճումներ է արել։ Նա դեռ չէ իրագործել միջազգային հեղափոխությունը, այս բանում նա «մեղավոր» է ձեր առաջ, այստեղ նա դեռ ձեր անհատուցելի պարտապանն է։ Սակայն այս տարիների ընթացքում Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Չեխո-Սլովակիայում և ամբողջ Եվրոպայում կատարված է հսկայական չափերի հասնող նախապատրաստական աշխատանք։ Ամերիկայում արհմիությունների մեջ կազմվել է ձախակողմյան թև և նրա ուժերն աճում են։

4-րդ Կոնգրեսը մեր կուսակցության աշխատանքը վերջնագումարելու յե և մեր կուսակցությունը յերջանիկ կլինի մի անգամ ևս հյուրընկալություն ցույց տալու բովանդակ աշխարհի Կոմունիստական կուսակցություններին և ոգնել նրանց իր սեփական փորձով։

# ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԻ ՈՐԱԿԱՐԳԸ

Սեպտեմբերի 20-ին կայացավ Կոմինտերնի Գործադիր Կոմիտեի նիստը, վորտեղ հաստատվեց չորրորդ կոնգրեսի որակարգը և նշանակվեցին զեկուցողներ ու զեկուցակիցներ։ Հաստատված է Կոմինտերնի չորրորդ կոնգրեսի հետևյալ որակարգը։

**1)** Գործադիր կոմիտեի զեկուցումը յեվ կոմիտեների հեռագա վարագիծը, զեկուց. ընկ. Զինովյեվ։

**2)** Ռուսական հեղափոխության հինգ տարին եվ համաշխարհային հեղափոխության հեռանկարները.— Գլխավոր զեկուցողն է լինելու ընկ. Լենինը, զեկուցակիցներ՝ ընկ. ընկ Տրոցկի, Կլարա Յեսկին, Կաշեն, Բուխարին եվ Ռեյակուն։

**3)** Կապիտալի արշավանքը՝ գլխավոր զեկուցողն է ընկ. Ռադեկը, զեկուցակիցներ՝ ընկ. ընկ. Տ. Մանն (Անգլիա), մի գերմանացի ընկեր (վորն նշանակվելու է գերման Կոմ. Կուս. Կենտր. Կոմիտեից) մի ֆրանսիացի ընկեր, վորը նույնպես նշանակվում է Ֆրանսիայի Կոմ. Կուս. Կենտրոնական Կոմիտեից և Զապոտոցկի (Չեխոսլովակիա)։

Որակարգի այս կետի առթիվ մի հատուկ զեկուցումով հրապարակ կգա ընկ. Բորդիգան (Իտալիա) «Ֆաշիզմի մասին»։

**4)** Պայքարը վերապրի գաղափարի դեմ յեվ Կոմունիստական Կուսակության խնդիրները.— զեկուցողներ ընկ. ընկ.



Քրոսար եվ Վայիան-Կուտյուրիե (Ֆրանսիա), Մակ Մանուս եվ Նյուբոյդ (Անգլիա), Շմերալը (Չեխո-սլովակիա) և Նոյլարով (Բալկանյան Ֆեդերացիա)։

**5)** Պրոֆեսիոնալ շարժում.— Ծրագրվում է կազմել մի հանձնաժողով, զեկուցողներն են լինելու ընկ. ընկ. Բրանդլեր (Գերմանիա) Լոզովսկի (Ռուսաստան) Տոմագի (Ֆրանս.) և մի ամերիկացի ընկեր։

**6.** Հողային հարցը։ Ծրագրված է ստեղծել սեկցիա. Զեկուցողներն են ընկ. ընկ, Վարգով (Վենգրիա), Բենո-Ֆան (Ֆրանսիա), Թեոդորովիչ (Ռ. Կ. Կ.) Կուտուցկայա (Լեհաստան), Մարկովիչ (Հարավ-Սլավիա) յեվ մեկ իտալացի ընկեր Իտալիայի Կոմ. Կուսակցության Կ. Կոմիտեից նշանակված։

**7.** Արեվելյան յեվ գաղութային հարցեր։ Նույնպես նախագծվում է կազմել սեկցիա։ Զեկուցողներն են ընկ. ընկ. Կատայամա (Ճապոնիա) Բոյ (Հնդկաստան) եվ Ք. Բավենցայն (Հոլանդիա)։

**8.** Երբական աշխատանք.— Նախագծվում է հանձնաժողով կազմել։ Գլխավոր զեկուցողն է ընկեր Հերկլե (Գերմանիա) զեկուցակիցներ ընկ. ընկ. Կրուսպսկայա, Բարբյուս, Բոլանդ-Հոլլս յեվ Կուվուսիենեն։

**9.** Դրությունը Ֆրանսիական կուսակցության մեջ փարիզի համագումարից հետո,— Զեկուցողներն են՝ ընկ. ընկ. Ֆրոսար յեվ Սուվարին։

**10)** Կոմինտերնի յեվ նրա մեջ մտնող կոմունիստական կուսակցությունների ծրագրը.— Նախագծվում է սեկցիայի կազմակերպ. զեկուցողներն են՝ ընկ. ընկ. Բուխարին յեվ Տայլ-Հայմեր, Սեկցիայի ղյուրոյի մեջ են մտնում ընկ. ընկ. Զինովյեվ, Տրոցկի, Ռադեկ, Տայլհայմեր, Վարգա, Շմերալը, Վարսկի, (Լեհաստան) Կաբակչիյեվ, (Բուլղարիա), Բորդիգա, (Իտալիա) յեվ ՇեՔՖլրը՝ (Նորվեգիա)։

**11.** Ցերիտասարդական կոմունիստական ինտերնացիոնալը. նախագծում է սեկցիա. զեկուցողներ՝ ընկ. ընկ. Վոյնցի յեվ Շիլլեր։

**12.** Սովյալների ոգնության միջազգային կոմիտեի զեկուցումը յեվ Ռուսաստանի տնտեսության վերականգնման հեռագա հայլերը. զեկուցողներ՝ Մյունցենբերգ։

**13.** Կոպերատիվ սեկցիայի զեկուցումը։

**14.** Կանանց քարտուղարության զեկուցումը. զեկուցանող՝ ընկ. Կլարա Յեսկին։

**15.** Կոմինտերնի գործադիր կոմիտեի ինՔորմացիոն աշխատանքների կազմակերպության հանձնաժողով. զեկուցող՝ ընկ. Պ. Լուի, հանձնաժողովի անդամներ՝ ընկ. ընկ. Վարգա, Ռա-

գեկ, Մայեր (*Գերմանիա*), Գրաչի (*Իտալիա*), Ալլպատի (*Վենգրիա*) Կոն (*Ուկրաինա*), Պրեոբրաժենսկի յեվ Մինկին (*Ռուսաստան*):

16. Գործադիր կոմիտեի վայրը յեվ Կ. Ի. Գ. Կ.-ի նախագահի ընտրությունը:

17. Կ. Ի. Գ. Կ.-ի աշխատանքների կազմակերպությունը:

# ԼՈԶՈՒՆԳՆԵՐ 5-ՐԴ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Կեցցե՛ Կոմունիստական ինտերնացիոնալի ՀՈՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ:

2. ՎՈՂՋՈՒՅՆ պրոլետարական հեղափոխության համար բանվորական շարքերը զորակոչող ԿՈՄԻՆՏԵՐՆԻՆ:

3. ՎՈՂՋՈՒՅՆ բանվորա-գյուղացիական հանրապետության պաշտպան ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆԸ:

4. Բանվո՛ր ու գյուղացի՛, այս 5-րդ տարեգարձին էլ՝ ուշիկ— գեպի թշնամին:

5. Ձե՛նք տա մեր խոշոր արդյունաբերությունը կապիտալի գիշատիչներին:

6. Խփե՛նք միջազգային կապիտալին՝ մեր արտադրական աշխատանքն ուժեղացնելով:

7. ԱՄՐԱԳՆԴԵ՛ՆԴ պրոլետարական դիկտատուրայի հիմի բանվոր-գյուղացիական ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ:

8. Հեղափոխության 5-րդ տարեգարձի տոնը— փա՛ռքն է մեր հերոսական Կարմիր բանակի:

9. Կեցցե՛ հեղափոխության հզո՛ր ճեգուկ ԿԱՐՄԻՐ ԲԱ՛ՆԱԿԸ:

10. Հոկտեմբերյան 5-րդ տարեգարձը—մահազուրկ է գաճակ, ես-ը ու մենշեվիկ իմպերիալիստների:

11. Գերմա՛ն պրոլետարնե՛ր: Հորս տարի առաջ դուք տապալեցիք բուրժուազիայի կամակատար Վիլհելմի գահը: Պատրա՛ստ յեղեք այսոր տապալելու նրա թագակիր Սթինեսի գահը:

12. Վողջո՛ւյն մեր յերիտասարդությանը— պրոլետարիատի մատաղ գվարդիային: Պրոլետարական այս մեծ հաղթանակի ոգը—վողջո՛ւյն:

13. Ալլեվս չի՛ իմանում կապիտալը ամբողջ յերկրագնդին,—աշխատավորությունը նվաճել է նրա մեկ-վեցերորդը:

14. Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք ամբողջ աշխարհը տիրելու:



15. Բանվորուհի՛ եվ գեղջկուհի՛! ձեր ազատագրումն սկսել է հոկտեմբերը—մենք կավարտենք:

16. Ռուսաստանի բանվորները ու գյուղացիները առաջին անգամ ճեղքեցին կապիտալի ռազմանակատը: Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, խորացրե՛ք ճեղքվածքը յեվ կործանե՛ք՝ բուրժուական ճորտության անարգ շղթաները:

17. Թագավորի կայսրությունն ու Կերենսկու հանրապետությունը—ճնշված ազգությունների համար բանտեր էին: Հանուր աշխարհում խորհուրդների հանրապետությունն է առաջինը, վոր ազատեց նրանց յեվ հիմի դրեց աշխարհիս գաղութային ժողովուրդների ազատագրությանը կապիտալի լծից:

18. Բանվոր կոմիսարը ջախջախեց բուրժուազիային ռազմանակատում— բանվոր դիրեկտորը կհաղթի բուրժուազիային տնտեսական ճակատում:

19. Խորհուրդների հանրապետության հինգամյակը—բանվորների յեվ գյուղացիների յեղբայրական միության հինգամյակն է:

20. Կեցցե՛ բաղաքի յեվ գյուղի աշխատավորների միացյալ ճակատը:

21. Կեցցե՛ Ռուսաստանի Կոմունիստական կուսակցությունը—պրոլետարական անգրանիկ հեղափոխության առաջնորդը:

22. Աշխատավոր գյուղացինե՛ր, ձեր միությունը բանվորների հետ—ձեզ հո՛ղ տվեց: Նույն միությունը կոգնի ձեզ զարգացնել յեվ ընդլայնել ձեր աշխատավորական տնտեսությունը:

23. Աշխատավորուհինե՛ր յեվ գեղջկուհինե՛ր, գործարանքերում ու գաշտերում, պայքարելով բայրայման դեմ, ամրապնդենք Հոկտեմբերի հաղթանակները:

24. Պրոլետարիատի վերջնական հաղթանակն արագացնելու համար գո՛ւրս բերեք ձեր շարքերից կապիտալի հյուծիչ գաճակներին, ես-ը ու մենշեվիկներին—նրանք աջակցում են բուրժուազիային՝ կապիտալի իշխանությունը վերականգնելու:

25. Կարմիր բանակը պաշտպանում է աշխատավորներին բոլոր յերկրների գահիններից:

26. Բանվորա-գյուղացիական Հանրապետության անհրաժեշտ է խաղաղություն: Նրան անհրաժեշտ է բոլոր բանվորների ու գյուղացիների ստեղծարար աշխատանքը:

27. Ուրվա խնդիրն է ամբողջ աշխարհում—բաղաքացիական պատերազմը: Նրա դրոշակն է—խորհրդային իշխանությունը:

28. Կոմունիստական Ինտերնացիոնալը— միջազգային պրոլետարիատի ապստամբության յեվ պրոլետարական դիկտատուրայի կուսակցությունն է։

29. Մի՛ դրոշակ կա միայն, որի համար արժե պայքարել ու մեռնել։ Այդ—կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշակն է։

30. Նայե՛ք մեր անցած ճամբեին։ Հաշվեցե՛ք հաղթանակն ու զոհերը։ Յեվ նոր վոգեվորությունն ու յեռանդը բո՛ղ տանեն մեզ նոր աշխատանքի յեվ պայքարի։

31. Դեռ չե՛ ջախջախված բռնատիրն—բայբայումն դեռ կենդանի չե։ Յելնե՛ք միակուռ յեվ հաղթե՛ք։

32. 1917-ի Փետրվարն աշխատավոր կնոջն ազատեց բազավորից։ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ— կապիտալիստից ու կալվածատերից։

33. Կեցցե՛ Հոկտեմբերյան Հեղափոխությունը, որ վերջին ստրուկին, աշխատավորուհուն ու գեղջկուհո՛ւն եվ հերոսամարտի կոչեց ընդդեմ կապիտալի։

34. Բոլոր յերկրների բանվորուհիներ յեվ գեղջկուհիներ՝, պատրաստեցեք Համաշխարհային Հոկտեմբերը։

35. Կոմունիստական կուսակցության դրոշակի տակ աշխատավոր ռուս կինն ու գեղջկուհին շուն, տվին Հոկտեմբերյան Հեղափոխությանը։ Յերրորդ Ինտերնացիոնալի դրոշակի տակ բոլոր յերկրների աշխատավորուհիները շուն, կտան պրոլետարական Համաշխարհային Հեղափոխությանը։

36. Կատարել արտադրական հրամանը— այս է գիտակից բանվորի առաջին պարտականությունը։

37. Բանվորնե՛ր, չմոռանաք արտադրական ծրագիրը։

38. Առանց աշխատանքի հաց չի՛ լինի։

39. Բանվո՛ր, հիշի՛ր վոր քո արտադրածի չափը—քո պարտականությունն է բանվոր դասակարգի առաջ։

40. Հեղափոխությունը վերջ տվեց ազայությանը։ Տո՛ւր նրան քո աշխատանքը։

41. Աշխատանքի ճակատի ռազմական խնդիրը—Խորհրդային յերկրների տնտեսական կարողության վերականգնումն է։

42 Հոկտեմբերյան հեղափոխությունը հնարավորություն տվեց ամբողջ բանվոր դասակարգին կազմակերպվել արհեստակցական զորավոր միություններում

43. Թագավորական Ռուսաստանում միությունները ճնշված էին։ Կերենսկու ոռով՝ մեկ միլիոն եր նրանց անդամ-



ների թիվը։ Հոկտեմբերյան հինգերորդ տարեդարձին արհմիությունները համախմբել են մի քանի միլիոն պրոլետարների։

44. Հոկտեմբերյան հեղափոխությունը արհմիություններում կազմակերպված բանվոր դասակարգին լայն ճանապարհ բացեց դեպի ժողովրդական տնտեսության շինարարությունը։

45. Հոկտեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձին Կարմիր Արհմիություններն են առաջնորդում համաշխարհային արհեստակցական շարժումը։

46. Կազմակերպել արտադրությունը—նշանակում է հաղթել կապիտալիստական իրավակարգը։

47. Բանվո՛ր կաշվեգործ Քո կարած կոշիկների ամեն մի նոր զույգը հեղափոխության հաղթանակին տանող ճանապարհն է կրճատում։

48. Բանվո՛ր մետաղագործ! լավ հիշիր, վոր քո մուրճիկ ամեն մի զարկով կռում ու կոփում ես կոմունիզմի հաղթանակը։

49. Բանվո՛ր լեռնագո՛րծ. գիտե՞ս, վոր քո փայտատի ամեն մի հարվածով կործանում ես հին ու մութ աշխարհի ամրոցները։

50. Շինարա՛ր. չմոռանաս, վոր քո կառուցած ամեն մի շենքը մոտեցնում է մեզ վերջնական հաղթանակին։

51. Յերկաթուղային բանվո՛ր, գիտցի՛ր, վոր ժամանակին ուղարկված ամեն մի մարդուային գնացքը վերածնության նոր թիվ է տալիս ժողովրդական տնտեսությանը։

52. Փաստաթղթի իմաստագործունեությունը—արտադրության հաջողության գրավականն է։

53. Բանվորնե՛ր, մոտեցեք յեվ խնամեցեք ձեր մասնական կազմակերպությունների—արհմիությունների շուրջը։

54. Վորքան շատ արտադրենք—այնքան շուտ կհաղթենք սովը, ցուրտն ու բայբայումը։

55. Բոլո՛ր դեպի արհ-տեխնիկական դպրոցները։ Սովորեցեք արդյունաբերություն ստեղծել յեվ ղեկավարել նրա զարգացումը։

56. Յերկաթուղին մասնագետներ է պահանջում։ Բոլո՛ր դեպի տեխնիկական դպրոց։

57. Ո՞վ բաց արեց գիտության դռները բանվորի յեվ գյուղացու առաջ.—Հոկտեմբերյան Հեղափոխությունը։

58. Վո՛չ մի անգրագետ սոցիալիստական յերկրում—այս է կոչը Կարմիր Հոկտեմբերի։

59. Ուզո՞ւմ ես տիրել արտադրությանը—ուսի՛ր։

60. Ով դեմ է գրագիտության՝ նա թշնամի չէ աշխատավորությանը։

61. Ուզո՞ւմ ես լավ ապրել—արտադրի՛ր։ Ուզո՞ւմ ես շատ արտադրել—սովորի՛ր։

62. Ո՞վ է հիմնել բոլորի համար անխիր աշխատանքա՝ չին միակ դպրոցը—խորհրդային իշխանությունը։ Ո՞վ է ազատել յերեխաներին գործարանային աշխատանքից—խորհրդային իշխանությունը։ Ո՞վ է միջոց տվել մեծերին ուսում առնելու—խորհրդային իշխանությունը։

63. Անգրագիտությունն—ահա ստրկության չեվ ճնշումների հարազատ հույրը։

64. Հախջախեցե՛ք անգրագիտությունը—նա՝ հակա-հեղափոխության ռեզերվն է։

65. Առանց լուսավորության—չկա կոմունիզմ։

66. Պիտի սովորենք, վոր հաղթենք չեվ պիտի հաղթենք վոր սովորենք։

67. Ժողովուրդներ բունավորողը—կրոնն է։

68. Չկա՛ն վնասազործ յերեխաներ.—կան միայն հիվանդ չեվ անտեր մնացածներ։

69. Հաղթենք տգիտությանն ու խավարին—նրանք են խորհրդային իշխանության ամենավտանգավոր թշնամիները։

70. Ամեն մի նորածին յերեխա, վորպես ապագա քաղաքացի՝ իրավատեր է իր հոգեկան չեվ Քիզիկական ուժերի լիակատար զարգացման։

71. Ուժեղ չեվ Քիզիկապես առողջ սերունդը—գրավականն է կոմունիզմի շուտափույթ իրականացման։

72. Խորհրդային յերկրների նույն-ապագեանը մանուկներն են—պահպանեցե՛ք նրանց։

73. Առողջ ազգաբնակությունը—կոմունիստական շինարարության գրավականն է։

Կենտրոնական Խորհրդային 1-ին Տպարան.